



ՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ



1962

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
СОВЕТ ПО ИСТОРИИ ЕСТЕСТВОЗНАНИЯ И ТЕХНИКИ

---

ИЗ ИСТОРИИ  
ЕСТЕСТВОЗНАНИЯ  
И  
ТЕХНИКИ

СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ

II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

---

1962

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ  
ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

II

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Ռ Գ Ս Հ Բ Ա Տ Ա Բ Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ե Ր Ե Վ Ա Ն



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների  
ակադեմիայի Խմբագրական-հրատարակչական խորհրդի  
որոշմամբ

*Համարում զետեղված են Հայաստանում սովետական կարգերի  
հաստատման 40-ամյակին նվիրված գիտական սեսիայում կար-  
գացված զեկույցումները և այլ ուսումնասիրություններ:*

*Համարում ընդգրկված են 14 գիտական ուսումնասիրություններ,  
հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնք նվիրված են աստրոֆիզի-  
կայի, էրկրաբանության, ֆիզիկայի, բիոլոգիայի, բժշկության, էլեկ-  
տրատեխնիկայի և գիտության այլ ճյուղերի զարգացման պատմու-  
թյան հարցերին:*

В номере помещены доклады, прочитанные на научной сессии, посвященной 40-летию установления Советской власти в Армении и др. исследования

В номере печатаются 14 научных исследований на армянском и русском языках, посвященных вопросам истории развития астрофизики, геологии, физики, биологии, медицины, электротехники и др. отраслям науки.

Խմբագրական կոլեգիա՝

Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. Ս. ԿՄՈՅԱՆ, Վ. Կ. ՉԱԼՈՅԱՆ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝

Հայ ժողովրդի հազարամյակների պատմության համեմատությամբ 40 տարին շատ փոքր ժամանակամիջոց է, սակայն, սովետական տարիները հանդիսացան մեր ժողովրդի ազգային վերածննդի, սովետահայ կուլտուրայի և գիտության աննախընթաց վերելքի տարիները: Սովետական Հայաստանում արտադրողական ուժերի զարգացումը պայմանավորեց մի շարք գիտությունների, հատկապես ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների լայն զարգացումը, որոնց խոշորագույն ներկայացուցիչների հետազոտությունները զգալի ներդրում են ոչ միայն սովետական, այլև համաշխարհային գիտության զանձարանում: Սովետական շրջանում գիտության տարբեր բնագավառներում ձեռք բերված նվաճումների մասին ներկա սեսիայում զեկուցումներով հանդես կգան մեր ավագ և երիտասարդ սերնդի ներկայացուցիչները: Մեր զեկուցման նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել բնագիտության և տեխնիկայի պատմության ստեղծման գործում եղած հաջողությունները, համառոտակի բնութագրել գիտական ուսումնասիրությունների արդյունքները և նշել մեր առաջիկա անելիքները:

Նախքան այդ հարցերին անցնելը, նշենք բնագիտության և տեխնիկայի պատմության նշանակությունը ու վիճակը նախասովետական Հայաստանում:

1 Զեկուցումը կարդացված է Բնագիտության և տեխնիկայի պատմության խորհրդի գիտական սեսիայում, նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին՝ մարտի 7-ին 1961 թ.:

Մարքսիզմի կլասիկները միշտ էլ կարևոր նշանակություն են տվել բնագիտության և տեխնիկայի պատմությանը: Վլադիմիր Իլյիչ Լենինը այս առնչությամբ գրել է. «Հեգելի և Մարքսի գործի շարունակությունը պետք է լինի մարդկային մտքի պատմության, գիտության և տեխնիկայի դիալեկտիկական մշակումը»<sup>1</sup>:

Պրոլետարական գրականության հիմնադիր, խոշոր մտածող Մաքսիմ Գորկին գրել է. «Առանց կուլտուրայի պատմությունն իմանալու հնարավոր չէ լինել կուլտուրական մարդ, առանց անցյալն իմանալու հնարավոր չէ հասկանալ ներկայի բուն իմաստը և ապագայի նպատակները»<sup>2</sup>:

Բնագիտության և տեխնիկայի պատմությունն ունի ճանաչողական ու դաստիարակչական մեծ նշանակություն: Նա օգնում է ինտելիգենցիայի լայն խավերին յուրացնելու և օգտագործելու շատ սերունդների ակննավոր մտածողների գիտական փորձը:

Անցյալի գիտական ժառանգության քննադատական ուսումնասիրությունը ժամանակակից հետազոտողների մոտ դաստիարակում է նորարարության ոգին: Նախառևոյուցիոն Հայաստանում խոսք չէր կարող լինել բնագիտության պատմությանը նվիրված գիտական լուրջ աշխատանքի մասին: XIX դարում և XX դարի սկզբներին հայ պարբերականներում, գիտության նվաճումները տարածելու նպատակով, տպագրվում էին բնական գիտությունների տարբեր հարցերին նվիրված առանձին հոդվածներ:

1920 թվականի նոյեմբերից հայ ժողովրդի պատմության մեջ սկսվում է բոլորովին մի նոր շրջան: 1921 թվականի հունվարին տեղի է ունենում Երևանի Պետական համալսարանի բացումը, որը դարձավ մեր ռեսպուբլիկայի բարձրորակ կադրերի պատրաստման դարբնոց: 1930-ական թվականներին բացվեցին մասնագիտացված բարձրագույն հաստատություններ: Սովետական Հայաստանում արդյունաբերության ու գյուղատնտեսության վերելքը, ազգային բարձրորակ կադրերի առկայությունը անհրաժեշտ դարձրին ՍՍՌԿ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի հիմնադրումը 1935 թվականին, որի բազայի վրա 1943 թ. նոյեմբերին հիմնադրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան: Այս բոլորը զարկ տվին գիտության զարգացմանը Հայաստանում: Սովետական Հայաստանում բնական գիտությունների

<sup>1</sup> Ленин, Философские тетради, стр. 144.

<sup>2</sup> М. Горький, Собр. сочинений, т. 26, 1953, стр. 178.

զարգացումը պայմանավորեց բնագիտութեան և տեխնիկայի պատմութեան հարցերով զբաղվելու անհրաժեշտութիւնը: Գիտութեան պատմութեան ուսումնասիրման համար խոշոր նշանակութիւն ունեցաւ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանում կենտրոնացված՝ հայ ժողովրդի անցյալի կուլտուրայի ու գիտութեան վերաբերյալ ավելի քան տասը հազար ձեռագրեր, հնատիպ գրականութիւն, արխիւ և այլ նյութեր:

Գիտութիւնների պատմութեան ասպարեզում կատարված ուսումնասիրութիւնների արդիւնքները ըստ առանձին բնագավառների ներկայացնում են հետևյալ պատկերը:

### ՖԻԶԻԿԱ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՄՈՎ

Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին 1918 թվականին հրատարակում է Անանիա Շիրակացու թվաբանական խնդիրների լրիվ բնագիրը՝ ռուսերեն թարգմանութեան հետ միասին: Թարգմանութիւնն ունի հետաքրքիր առաջաբան ու ծանոթագրութիւններ: Այդ թարգմանութիւնը առաջին անգամ հնարավորութիւն տվեց լայնորեն ծանոթանալու VII դարի հայ անվանի մաթեմատիկոս Անանիա Շիրակացու կյանքին ու նրա կազմած թվաբանական խնդիրների բովանդակութեանը: Օրբելու հայտնած այն կարծիքը, որ այդ խնդիրները կազմում են Շիրակացու թվաբանական դասագրքի միայն մի հատվածը, նպաստեց կատարելու նոր որոնումներ, որոնք հետագայում տվեցին դրական արդիւնքներ: 1931 թվականին Բ. Բահաթրյանը իր մի հոդվածում Շիրակացու թվաբանական խնդիրների լուծման առնչութեամբ հետաքրքիր և հավանական ենթադրութիւն է անում, պնդելով, որ տրված կոտորակը մեկ համարիչ ունեցող կոտորակների միջոցով արտահայտելը կապված է շափ ու կշիռների հետ:

1939 թվականին պրոֆ. Ա. Աբրահամյանը հրատարակում է իր հայտնաբերած՝ Շիրակացու թվաբանական աղյուսակները, որոնք խոշոր նշանակութիւն ունեն մաթեմատիկայի պատմութեան ուսումնասիրութեան համար:

1941 թվականին Տ. Թումանյանը, Մատենադարանի որոշ ձեռագրերի ուսումնասիրութեան հիման վրա մի հոդված է տպագրում անկյունավոր թվերի մասին: Հեղինակը մանրամասն ջարագրելով ձեռագրերում պահպանված մաթեմատիկական նյութերը, որոշակի փերպով ցույց է տալիս, որ հին Հայաստանի դպրոցներում մաթե-

մատիկայի դասավանդումը կատարվել է բարձր մակարդակով: Հետագայում Տ. Թումանյանը գրում է թեկնածուական դիսերտացիա և 1953 թվականին սպազորում Եվկլիդեսի երկրաչափության հայերեն հնագույն թարգմանությունը նվիրված արժեքավոր հոդված:

Սկսած 1944 թվականից Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագրերում և այլ պարբերականներում Գ. Պետրոսյանը տպագրում է մի շարք հոդվածներ՝ նվիրված մաթեմատիկայի պատմության հարցերին Հայաստանում՝ ուրարտական շրջանից սկսած մինչև XIX դարը:

1959 թվականին լույս է տեսնում Գ. Պետրոսյանի «Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում» մենագրական աշխատությունը: Աշխատության մեջ լուծված հարցերից նշենք մի քանիսը: Հայերը շատ վաղ յուրացնում են հունական հաշվողական արվեստը ու զարգացնում այն: Հայաստանում մաթեմատիկական գիտության զարգացմանը նպաստեց միջազգային առևտուրը, որը կատարվում էր Հայաստանի վրայով անցնող ճանապարհներով: Մաթեմատիկական գիտելիքների բարձր մակարդակի մասին են վկայում Գառնիի, Զվարթնոցի, Դվինի, Անիի և ուրիշ շատ ճարտարապետական կոթողները:

Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը մեզ հասած, աշխարհում ամենահին դասագիրքն է, որը պարունակում է թվաբանական ամբողջական աղյուսակներ և, հաշվողական արվեստի վերաբերյալ իր հարուստ նյութով, արմատապես տարբերվում է հույն մաթեմատիկոս Նիկոմաքոսի աշխատությունից: Հին Հայաստանում գործածված մաթեմատիկայի մեջ ուրարտական թվաբանության հետքերը ցույց են տալիս, որ հայերը Մեսրոպ Մաշտոցից առաջ ունեցել են գիր ու գրականություն: Եվկլիդեսի երկրաչափության հայերեն թարգմանությունը, Հայաստանում, հունարեն բնագրից Գրիգոր Մագիստրոսի կողմից կատարվել է 1051 թվականին, այսինքն 450 տարի շուտ, քան Արևմտյան Եվրոպայում: Այս փաստը ակնառու կերպով ժխտում է բուրժուական պատմաբանների այն սխալ տեսակետը, որ իբր թե գիտությունը միմիայն արևմուտքից է տարածվել դեպի արևելք:

XIV դարի հեղինակ Նիկողայոս Արտավազդի մաթեմատիկական աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Շիրակացու և նրա հետևորդների աշխատությունները հետագայում տարածվել են Բյուզանդիայում, նպաստելով բյուզանդական

մաթեմատիկական գիտությունների զարգացմանը: Անհրաժեշտ է նշել, որ Արտավազդի աշխատության մեջ, այլ հարցերի հետ միասին, շարադրված է կոմպոզիցիայի թվից ցանկացած մոտավորությամբ քառակուսի արժատ հանելու եղանակը:

Գ. Պետրոսյանը և Բ. Ռոզենֆելդը 1960 թվականին հրատարակած իրենց համատեղ աշխատության մեջ արաբական մաթեմատիկական աղբյուրների հիման վրա, հավանական են համարում, որ Հայաստանում V դարում եղել է Աղանիս անունով հայ մաթեմատիկոս, որը զբաղվել է մաթեմատիկական գիտության այնպիսի մի նրբին հարցով, ինչպիսին է Եվկլիդեսի 5-րդ պոստուլատի ապացուցման պրոբլեմը: Միջին դարերում Աղանիսի ստացած արդյունքներից օգտվել են շատ գիտնականներ, այդ թվում նաև Նասիրէդդինը և Օմար Խայամը:

Վերջին տարիներս Ա. Եզանյանը զբաղվում է մանկավարժական մեթոդական նշանակություն ունեցող մաթեմատիկական ձեռագիր և տպագիր աղբյուրների ուսումնասիրությամբ: Նրա պրակտիկական գրքերը և տալիս, որ XVIII—XIX դարերում գրված դասագրքերի մեջ կան այնպիսիները, որոնք բովանդակությամբ և մեթոդական տեսակետից կարելի է դասել արևմտեվրոպական երկրների լավագույն դասագրքերի շարքը (օրինակ՝ Ս. Պրոնյանի և ուրիշների դասագրքերը):

Մովետական Միությունում ֆունկցիաների տեսության մոտավորությունների բնագավառում կատարված աշխատանքներին են նվիրված Մ. Մերգելյանի ակնարկային հոդվածները, որտեղ պատշաճ տեղ է հատկացված հայ գիտնականների աշխատանքներին:

Ֆիզիկայի պատմության բնագավառում հետաքրքիր ուսումնասիրություններ է կատարել Ա. Թովմասյանը: Նա ցույց է տվել, որ XVIII դարի հայ գիտնականներ Խ. Էրզրումեցին, Մ. Սաղաթելյանը և ուրիշներ ֆիզիկայի հարցերը շարադրել են բարձր գիտական մակարդակով: Այդ հեղինակներն ընդունել են նյութերի անվերջ բաժանելիությունը և գրել են նյութի պահպանման օրենքի մասին: Նրանք գտնում են, որ ամբողջ բնությունը գտնվում է հավիտենական փոփոխման և շարժման մեջ:

Մովետական տարիներին հայկական տոմարի և տիեզերագիտության պատմության հարցերով առաջին անգամ զբաղվել է Լ. Լ. Սեմյոնովը: Նա հայ աստղագետներին և տոմարագետներին նվիրված մի շարք հոդվածներ է տպագրել Մատենադարանի

«Գիտական աշխատություններ»-ում և պարբերական մամուլում:

1. Սեմյոնովից հետո հայկական տոմարի պատմությամբ զբաղվել է Հ. Ս. Բաղալյանը: Նրա աշխատություններից հատկապես արժեքավոր է «Օրացույցի պատմությունը», որը լույս է տեսել 1940 թվականին:

Հայ աստղագիտության պատմության համար մեծ նորություն հանդիսացավ ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ջանքերով ձեռք բերված հայկական աստղաչափան, որի ուսումնասիրությամբ զբաղվեց Բ. Թումանյանը: Փաստորեն դա մեզ հայտնի միակ աստղադիտական գործիքն է, պատրաստված XVII դարում հայ մասնագետի կողմից: Աստղաչափայի վրա զբառումները կատարված է հայերեն լեզվով: 1960 թվականին Թումանյանը գրեց XIV դարում մազաղաթից պատրաստված մի այլ գործիքի՝ լուսնացույցի մասին, որը վկայում է այն հետաքրքրության մասին, որ անցյալում հայ մասնագետները ցուցաբերել են աստղագիտության նկատմամբ: Վերջապես Բ. Թումանյանը և Ռ. Աբրահամյանը 1956 թվականին համատեղ հրատարակել են Շիրակացու աստղագիտական աշխատանքներին նվիրված մի ուսումնասիրություն: Հետագայում այդ ուսումնասիրությունը թարգմանվել է յոթ լեզուներով:

Սովետական գիտնականները մեծ ուշադրություն են դարձնում աստղագիտական ու տոմարագիտական տեքստերի հայտնաբերման և հրատարակման գործին, մի բան, որ կարելի է ասել, անուշադրության էր մատնված նախասովետական շրջանում: Այս բնագավառում առաջին խոշոր նորությունը հանդիսացավ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության ընդարձակ բնագրի հայտնաբերումն ու հրատարակումը: Այդ տեքստը հրատարակության պատրաստեց Ա. Աբրահամյանը, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Հ. Աճառյանի խմբագրությամբ: Շիրակացին իր այդ աշխատության մեջ խոսում է Երկրի գնդաձևության, Արեգակի ու Լուսնի խավարումների, Ծիր Կաթինի և տիեզերական զանազան երևույթների մասին: Անցյալում հայտնի էր այդ աշխատության համառոտ խմբագրությունը, որը հրատարակել է պրոֆ. Պատկանյանը:

Տեքստաբանության բնագավառում հետաքրքիր նորություն հանդիսացավ Շիրակացու՝ լուսնացույցի հայտնաբերումն ու հրատարակումը Ա. Աբրահամյանի կողմից: Լուսնացույցի մեջ հեղինակը շարադրել է Լուսնի նորելու և լրանալու ամսաթվերը, ժամե-

քը և բուսակները 19 տարիների ցիկլի համար, որը կարելի է օգտագործել բոլոր ժամանակներում: Շիրակացին այդ աշխատությունների համար գրել է հատուկ առաջաբան, ուր հայտնում է, որ ինքը լուսնի պարբերաշրջանները որոշելու համար դիտումներ է կատարել: Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ հին Հայաստանում կատարվել են երկնային մարմինների դիտումներ:

Սովետական շրջանի աստղագիտության պատմության հարցերով զբաղվում է Լ. Միրզոյանը: Նա տպագրել է մի քանի հետաքրքիր հոդվածներ Բյուրականի աստղադիտարանի մասին:

### ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Հայ մատենագրության ուսումնասիրության հիման վրա Ա. Հարությունյանը գրել է տեխնոքիմիայի պատմությանը նվիրված մի շարք ուշագրավ աշխատություններ: Առաջին անգամ մեզ մոտ հայտնաբերվեցին և լուսաբանվեցին ներկեր, թանաքներ, համաձուլվածքներ, բրոնզե իրեր, դեղանյութեր, եթերային յուղեր և այլ նյութեր, ինչպես նաև մագաղաթ պատրաստելու եղանակները: Հեղինակը հաջողությամբ փորձարկել է մի շարք դեղագրեր՝ հանքային, կենդանական և բուսական պիգմենտներից զանազան դույնի ներկեր ու թանաքներ պատրաստելու ուղղությամբ, որոնք դիմացկուն են թե՛ ջրի և թե՛ լույսի հանդեպ: Այս փաստական տրվյալների հիման վրա հաջողվել է ապացուցել այն խոշոր մասնակցությունը, որ ունեցել են տեխնոքիմիայի զարգացման ասպարեզում հայ միջնադարյան վարպետները և գիտնականները: Որոշ խնդիրների լուծման հարցում, հակառակ բուրժուական պատմագրության տվյալների, որ իբր հին Ռուսիայի գիտությունն ու կուլտուրան գալիս են միմիայն Եվրոպայից, Ա. Հարությունյանի աշխատության մեջ այլ հարցերի հետ միասին ապացուցված է նաև որ տեխնոքիմիական գիտությունների մուտքը Եվրոպա կատարվել է արևելքից և, այսպես կոչված, Կովկասյան դռներից, մասնավորապես Հայաստանից:

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանի սկզբնաղբյուրների ուսումնասիրության հիման վրա Տ. Ղազանչյանի գրած «Ակնարկներ քիմիայի պատմության Հայաստանում» մենագրական աշխատությունը, որը ուսերեն լեզվով հրատարակվեց 1955 թվականին: Այդ աշխատության մեջ հեղինակը եզրակացնում է, որ միջնա-

դարյան Հայաստանում քիմիայի և բնագիտության մյուս բնագավառների գիտելիքները շարունակում էին զարգանալ անտիկ աշխարհում ստեղծված՝ ստոյիկների ուսմունքի, բնափիլիսոփայության ուղղությամբ: Ավելի՛ն, մեր գիտնականները (Վ. Զալոյան, Ավ. Տեր-Պողոսյան, Ռ. Գաբրիելյան, Ա. Կծոյան, Ս. Արևշատյան, Գ. Գրիգորյան և ուրիշներ) համոզիչ կերպով ցույց են տվել, որ բնության մեջ տեղի ունեցող բնագիտական և ընդհանուր կենսաբանական երևույթներն ու պրոցեսները հասկանալու խնդրում միջնադարյան Հայաստանում առանձին հեղինակների կողմից ցուցաբերվել են աշխարհամբռնման մատերիալիստական և էվոլյուցիոնիստական տենդենցներ: Դրանք մեծ չափով նպաստել են բնագիտության և փիլիսոփայության մեջ ուսցիոնալ մտքի զարգացմանը և, մյուս կողմից՝ ուժեղ հարված են հասցրել եկեղեցական դոգմատիկ ըմբռնումներին: Սովետական շրջանի պատմության հարցերով զբաղվում է Վ. Ազատյանը, վերջերս լույս տեսավ նրա արժեքավոր հոդվածը նվիրված քիմիայի զարգացմանը Սովետական Հայաստանում:

Սովետական Հայաստանում կենսաբանական մտքի զարգացման պատմության հարցերով զբաղվել են հատկապես, պրոֆ. Ավ. Տեր-Պողոսյանը և գիտության վաստակավոր գործիչ Ռ. Բ. Գաբրիելյանը:

Ուսումնասիրելով հին և միջնադարյան հայ պատմիչների, փիլիսոփաների և այլ հեղինակների՝ կենսաբանական բնույթի ձեռագիր աշխատությունները, ինչպես և թարգմանական գրականությունը, Ավ. Տեր-Պողոսյանը գրեց. «Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև XVIII դարը» շատ կողմերով հետաքրքրական մենագրությունը, որը լույս տեսավ 1960 թվականին: Հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ մեզ շրջապատող բնության երևույթների վերաբերյալ գիտելիքները Հայաստանում զարգացնել են՝ Արևելքի և Արևմուտքի մեր հարևան երկրների ժողովուրդների մշակած կուլտուրաների փոխազդեցության ուղորտում, աշխատանքի փորձի ընդհանրացումների հիման վրա՝ բնափիլիսոփայության ուղղությամբ:

Կենսաբանության բնագավառի վերաբերյալ մեզ հասած գրական հարուստ ժառանգության քննադատական օգտադրոժման, մարքսիստական մեթոլոգիայի դիրքերից ելնելով, պատմական մի շարք հետաքրքրական աշխատություններ է տվել Ռ. Բ. Գաբրիելյանը: Այս առումով հիշատակության արժանի են հեղինակի «Ակ-

նարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմութեան հայ գրականութեան մեջ XIX—XX դարերում», ստվար մենագրական աշխատութեանը, որից առանձին մասերով արդեն հրատարակված է 50 տոկոսը: Այնտեղ վերլուծվում է այն գրականութեանը, որը դրսևորում է հայ գործիչների մտքերը էվոլյուցիոն տեսութեան՝ դարվինիզմի և այդ ուսմունքի հակառակորդ բուրժուական հետադեմ գիտնականների միջև տեղի ունեցած անհաշտ պայքարի մասին:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Գաբրիելյանի «Միքայել Նալբանդյանը և բնագիտությունը» աշխատութեանը: Այստեղ նա տալիս է Մ. Նալբանդյանի մատերիալիստական հայացքները կենսաբանութեան բնագավառում: Առանձնապես շեշտվում է ռևոլյուցիոն-դեմոկրատ գործիչների, մանավանդ մինչդարվինյան էվոլյուցիոնիստ, ուսուս առաջադեմ բնագետ Կարլ Ռուլյեի ազդեցութեանը Նալբանդյանի կենսաբանական հայացքների կազմավորման վրա:

#### ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Երկրաբանական գիտությունների պատմութեան ուսումնասիրման բնագավառում զգալի գործ են կատարել Ս. Տիգրանյանը, Պ. Սահակյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Ասլանյանը, Ա. Մեսրոպյանը, Վ. Մելքոնյանը, Մ. Յուզբաշյանը և ուրիշներ: Հրապարակի վրա եղած մի շարք աշխատութեաններ հիմնականում նվիրված են սովետական շրջանում մեր ռեսպուբլիկայում երկրաբանական ծառայութեան կազմակերպման գործի և ձեռք բերված հաջողութեանների շարադրմանը: Պ. Սահակյանի «Հայկական ՍՍՌ երկրաբանական ծառայութեանը 25 տարում» և Ս. Մկրտչյանի «Գիտութեան նվաճումները Հայաստանի երկրաբանական կառուցվածքի և հանքային հարստութեանների հետազոտման գործում» աշխատութեանները ամփոփում են Հայաստանի երկրաբանական ուսումնասիրութեանը մինչ սովետական և հատկապես սովետական շրջանում, արտագրական և գիտական կազմակերպութեանների կատարած աշխատանքը և նրանց ձեռք բերած նվաճումները: Վ. Մելքոնյանի «Պղնձի մետալուրգիան Հայաստանում» աշխատութեան մեջ շարադրված է պղնձաձուլման գործի զարգացման պատմութեանը XVIII դարի 60-ական թվականներից մինչև մեր օրերը: Լուսաբանվում են ձուլման մեթոդների, սարքավորումների հետ

կապված հարցերը և տրվում է աշխատավորների իրավատնտեսական դրուժյան նկարագրությունը:

«Հայաստանի լեռնամետալուրգիական արդյունաբերությունը 40 տարում» ժողովածուի մեջ հոդվածներ են հրատարակել Ա. Ասլանյանը, Մ. Յուզբաշյանը և Վ. Զարապովը: Հոդվածները նվիրված են մետաղական հանքավայրերի ուսումնասիրությանը և լեռնահանքային ու մետալուրգիական արդյունաբերության նվաճումներին:

Երկրաբանության պատմության մի քանի հարցերի մշակմանը, ինչպես նաև հայ ականավոր հանքաբան Անդրիաս Արծրունու կյանքին ու գործունեությանն են նվիրված Ս. Տիգրանյանի աշխատությունները: Հայ ականավոր երկրաբան, երկրաբանական գիտությունների ինստիտուտի հիմադիր պրոֆ. Հովհ. Կարապետյանին նվիրված մենագրության վրա է աշխատում Լ. Ավագյանը:

Աշխարհագրությունը ծառայել է հայ ժողովրդի ինքնաճանաչությունը վառ պահելու գործին, հաջորդ սերունդներին տեղեկություններ հաղորդելով մեր հայրենիքի տեղագրության, բնական հարստությունների ու գեղեցկությունների մասին, ոգեշնչելով նրա զավակներին օտարերկրյա զավթիչների դեմ մղված մահու և կենաց պայքարում:

Ա. Բ. Բաղդասարյանը 1956 թվականին հրատարակված հոդվածում, Մ. Խորենացու աշխատության ուսումնասիրության հիման վրա, ցույց է տվել Խորենացու աշխարհագրական կարևոր եզրակացությունները, որոնք համապատասխանում են նաև արդի պայմաններին և հիմք են տալիս ենթադրելու, որ 1500 տարվա ընթացքում մեր երկրի կլիման նկատելի փոփոխությունների չի ենթարկվել:

1956—1957 թվականներին հրատարակվեցին Ա. Բ. Բաղդասարյանի, Գ. Մ. Աբրահամյանի, Կ. Մ. Ավետիսյանի և Ա. Ա. Ասլանյանի հոդվածները՝ նվիրված Խ. Աբովյանի աշխարհագրական ժառանգությանը:

Ա. Բաղդասարյանը Սովետական Հայաստանում աշխարհագրության զարգացման հարցերին նվիրված իր հոդվածում (1961 թ.) ցույց է տալիս, որ առաջին անգամ սովետական կարգերի օրոք է պետականորեն կազմակերպված աշխատանք կատարվում երկրի բնական պայմանների ուսումնասիրության գծով և հնարավորություններ են ստեղծվում տեսական ընդհանրացումների կատարման, երկրի շրջանացման պրոբլեմի լուծման և այն ժողովրդատնտեսական կարիքներին ի սպաս դնելու ուղղությամբ:

Թ. Խ. Հակոբյանը տվել է պատմա-աշխարհագրական շարք աշխատություններ, իսկ «Աշխարհագրության պատմություն» նրա ձեռնարկում (1955—1957 թթ.) առաջին անգամ հայի մի է բերված այդ բնագավառում կատարված նյութերը հին բերից սկսած մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան: Այս աշխատությունն աչքի է ընկնում գիտության պատմության հարցերի լուսբանման նկատմամբ հասարակական-պատմական մտեցումով:

1957 թվականին լույս տեսավ Հ. Ստեփանյանի «Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում» աշխատությունը, որը մեզ մոտ իր տեսակի մեջ առաջինն է: Այստեղ տրվում է հայ քարտեզագիրների կողմից թե Հայաստանում և թե այլ երկրներում լույս ընծայված քարտեզները, բերվում է նրանց ցուցակը ժամանակագրական կարգով և 188 քարտեզների համառոտ նկարագրությունը: Առաջին անգամ նկարագրվում և գիտական վերլուծության են ենթարկվում 1665 թվականին Ամստերդամում հրատարակված առաջին հայերեն քարտեզը՝ «Համաստարած աշխարհացույցը», 1849 թվականին Վենետիկում հրատարակված հայերեն «Ատլաս աշխարհացույց պատկերացրը», 1850 թվականին Վիեննայում պատրաստված առաջին հայերեն գլոբուսը («Երկրագունդ»):

Գ. Ս. Աբրահամյանը «Ռուսական աշխարհագրության դերը Հայաստանի ուսումնասիրության գործում» իր դիսերտացիոն աշխատության մեջ վերլուծման է ենթարկել Հայկական լեռնաշխարհի տերիտորիայի ուսումնասիրությունը ռուսների կողմից՝ XV դարից մինչև XX դարի առաջին տասնամյակն ընկած ժամանակամիջոցում:

Նույն հեղինակի 1954 թվականին հրատարակված «Հայաստանում XV—XVII դարերի ռուս ճանապարհորդների երթուղիների մասին» հոդվածում ճշտվում են XV—XVII դարերի մի շարք ռուս ճանապարհորդների՝ Ա.Ֆանասիյ Նիկիտինի, Գազարայի և այլոց վիճելի երթուղիները:

Շուրջ երկու տասնամյակ է, որ Աշոտ Արզումանյանը, գրականության և արվեստի կապերի հարցերի ուսումնասիրությանը զուգընթաց, զբաղվում է սովետական շրջանում ռուս-հայկական գիտա-տեխնիկական համագործակցության հարցով:

Համագործակցության պատմության բնագավառում Լ. Ա. Օրբելու, Ա. Ղ. Իոսիֆյանի, Բ. Ա. Ֆանարջյանի, Հ. Գ. Մաղաքյանի, Մ. Գ. Մանվելյանի, Ա. Բ. Սեվերնիի և ուրիշների ուսումնասիրու-

ները 1960 թվականին հրատարակվել են Ա. Մ. Արզումանյանի  
եկամուխություն» գիտական արժեքավոր երկհատոր աշխատու-  
նքերում:

«Բարեկամություն» աշխատության մեջ գիտական համագոր-  
կցությանը նվիրված ուսումնասիրություններն ու հողված-  
քը լույս են սփռում ռուսական գիտության դերի, ռուսականավոր  
գիտնականների կատարած աշխատանքների, Սովետական Հայաս-  
տանում գիտության և տեխնիկայի զարգացման, մեր ռեսպուբլի-  
կայի գիտնականների ստեղծագործական աշխատանքների վրա: Այդ  
արժեքավոր նյութերը միաժամանակ խոսում են այն ավանդի մա-  
սին, որ մտցնում են հայ գիտնականները սովետական և համաշ-  
խարհային գիտության գանձարանը:

Վ. Համբարձումյանի «Գիտությունը Հայաստանում 40-տա-  
րում» վերջերս լույս տեսած աշխատությունը, որի սեղմ էջերում  
նշվում են Հայաստանի գիտության անցած ուղին և նրա նվաճում-  
ները, ուղեցույց է հանդիսանում գիտության պատմության ման-  
րամասն շարադրման համար:

Մեր գիտնականների վերը նշած հետազոտություններից շա-  
տերը, որոնք վերաբերվում են դարերի ընթացքում մեր ժողովրդի  
ստեղծած ինքնատիպ մշակույթի պատմության ընտիր էջերին, տեղ  
են գտել հանրագիտարաններում (Սովետական մեծ, Փիլիսոփայա-  
կան, Բժշկական հանրագիտարանների) և ռուսերեն լեզվով վերջերս  
լույս ընծայված տարբեր դասագրքերում, ձեռնարկներում, մենա-  
գրություններում և գրական այլ աղբյուրներում:

Մեր գիտնականներն իրենց կատարած արժեքավոր ուսում-  
նասիրությունների արդյունքների մասին ղեկուցումներով հանդես  
են եկել ոչ միայն համամիութենական գիտական սեսիաներում և  
կոնֆերանսներում, այլև գիտությունների պատմության միջազգա-  
յին կոնգրեսներում:

Ինչպես տեսանք Հայաստանի գիտնականները որոշակի նվա-  
ճումներ ունեն գիտությունների պատմության հարցերի մշակման  
գործում: Սակայն ձեռք բերված նվաճումները պետք է համարել  
առաջին քայլերը: Սովետական շրջանի գիտության պատմության  
հարցերի գիտական մշակումը առաջ տանելու համար անհրաժեշտ  
է, որպեսզի մեր անվանի գիտնականները ակտիվ մասնակցու-  
թյուն ունենան պատմության հարցերի մշակմանը: Եթե բնագի-  
տության պատմության հարցերի մշակումը հասցվի ժամանակա-  
կից գիտության մակարդակին, գիտությունը գրանից մեծապես

կշահի իր զարգացման ուղիները ճշտելու տեսակետից: Հարակից գիտությունների ձեռք բերած արդյունքների ուսումնասիրությունը և ընդհանրացումը նոր ուղիներ կնշեն այդ գիտությունների զարգացման համար:

1960 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հոբելյանական սեսիայում կարգացած «Գիտությունը Հայաստանում 40 տարում» իր զեկուցման մեջ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը խնդիր դրեց մոտակա տարիներին ստեղծել Հայաստանում գիտությունների պատմության մանրամասն շարադրանքը: Այդ խնդրի իրագործումը անհրաժեշտաբար պահանջ է դնում, որպես առաջին կարևոր քայլ, հրապարակի վրա ունենալ առանձին գիտությունների պատմությունը, առանձին գիտական հիմնարկների և բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմությունը:

Անհրաժեշտ է, որպեսզի Ակադեմիայի սիստեմում գործող բոլոր ինստիտուտները, սեկտորները և լաբորատորիաները արագ ձեռնամուխ լինեն իրենց գիտական հիմնարկների պատմության հարցերի մշակմանը և այն տպագրության պատրաստին 1963 թվականին՝ Ակադեմիայի հիմնադրման 20-րդ տարեդարձին: Նման աշխատանքներ պետք է կատարվեն նաև Ակադեմիայի սիստեմից դուրս գիտական հիմնարկների և բուհերի գծով: Բարձրագույն ուսումնական հիմնարկների համար ուսանելի է Պետական համալսարանի փորձը:

Սովետական շրջանի գիտության պատմության հարցերի մշակման հետ մեկտեղ մենք պետք է շարունակենք հայ ժողովրդի անցյալի գիտական ժառանգության ուսումնասիրությունը:


Պրոպագանդելով սովետական գիտության և տեխնիկայի վիթխարի հաջողությունները, ինտելիգենցիայի լայն խավերի, հատկապես երիտասարդության մեջ պետք է առաջացնենք խոր հպարտության զգացմունք դեպի մեր ունեցած նվաճումները, դաստիարակենք սովետական վառ հայրենասիրություն, սեր դեպի գիտությունը և մեր սոցիալիստական Հայրենիքը:

Г. Б. ПЕТРОСЯН

## УСПЕХИ ИСТОРИИ ЕСТЕСТВОЗНАНИЯ И ТЕХНИКИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

### Резюме

40 лет Советской Армении явились периодом подлинного возрождения науки и культуры армянского народа.



Развитие производительных сил в республике предопределило развитие наук, в особенности физико-математических и технических.

Передовые ученые Армении своими исследованиями вносят значительный вклад в Советскую и мировую науку.

В статье кратко отмечается большое значение истории наук, как одной из наиболее важных и увлекательных областей знания важнейшего участка идеологического фронта.

На основе научных исследований (в библиографии приводится перечень трудов, затронутых в работе) кратко характеризуются успехи истории естествознания и техники в Советской Армении по различным отраслям науки: математики, физики, астрофизики, химии, биологии, геологии и географии.

На основе исследований по отдельным вопросам истории естествознания, в частности по изданным монографическим работам по истории математики, химии и биологии, показано, что армяне в древние и средние века владели значительными знаниями, они не только усваивали науку своего времени, но и значительно содействовали ее развитию.

В конце работы, наряду с другими вопросами, ставится вопрос более активной разработки истории естествознания и техники за советский период, в частности истории Академии наук Армянской ССР.

#### Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն — ЛИТЕРАТУРА

- Աբրահամյան Ա. Բ. — Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:
- Աբրահամյան Ա. Բ. — Շիրակացու աստղագիտական նորահայտ աղյուսակները: Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, I, Երևան, 1960:
- Աբրահամյան Գ. Ս. — Ռուսական աշխարհագրության դերը Հայաստանի ուսումնասիրության գործում, Երևան, 1954:
- Ազատյան Վ. Գ. — Քիմիայի զարգացումը Սովետական Հայաստանում: Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, I, Երևան, 1960:
- Բաղդյան Հ. Ս. — Օրացույցի պատմությունը, Երևան, 1940:
- Բահաբրյան Բ. — Հին եգիպտական, Անանիա Շիրակացու և ժողովրդական հաշվումների ու խնդիրների նմանությունը: ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի ժողովածու, I, Երևան, 1931:
- Պարթևյան Ռ. Բ. — Նալբանդյանը և բնագիտությունը: Արմֆանի տեղեկագիր, 1-2, Երևան, 1940:

- Յգանյան Ա. Մ.—Մաթեմատիկայի հայերեն ձևազեր դասագրքերը և մաթեմատիկական տերմիններ: Հեռակա մանկ. ինստ. գիտ. աշխատությունների ժողովածու, 6, Երևան, 1960:
- Թովմասյան Ա. Կ.—Ստեփանոս Աբգարյանի «Գրքուկ», որ կոչի սկզբունք ընական դիտությունն» աշխատության մասին: Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, 1, Երևան, 1960:
- Թումանյան Բ. Ե.—Հայկական նորահայտ աստղագիտական գործիք, Երևան 1958:
- Թումանյան Բ. Ե.—Միջնադարյան Հայկական լուսնացույցը: Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, 1, Երևան, 1960:
- Հակոբյան Ք. Խ.—Աշխարհագրության պատմություն, Երևան, 1955—1957:
- Համբարձումյան Վ. Հ.—Գիտությունը Հայաստանում 40 տարում, Երևան, 1960:
- Միրզոյան Լ. Վ.—Հայկ. ՍՍՌ ԳԱ Բյուրականի աստղագիտարանը, Երևան, 1956:
- Չալոյան Վ. Կ.—Հովհաննես Երզնկացու-Պլուզի բնագիտական հայացքները: Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, 1, Երևան, 1960:
- Պետրոսյան Գ. Բ.—Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959:
- Սեմյոնով Լ. Լ.—Սարկավագադիր տոմարը, «Էջմիածին», Էջմիածին, 1951, 1—3:
- Սեմյոնով Լ. Լ.—Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին: Մատենադարանի գիտ. նյութ. ժողովածու, 5, Երևան, 1941:
- Սեմֆանյան Հ. Ս|—Հայ բարոեգագրական հրատարակությունները 260 տարում, Երևան, 1957:
- Տեր-Պողոսյան Ա. Գ.—Բիլոդիական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարը, Երևան, 1960:

Ленин В. И. Философские тетради.

Арзуманян А. М. Дружба, Ереван, 1960.

Арутюнян А. Х. История технохимии. Журнал «Труды истории естествознания и техники АН СССР», 3, Москва, 1948.

Арутюнян А. Х. Чернила и краски по древнеармянским рукописям. Ереван, 1941.

Асланян А. Т. Успехи геологической изученности рудных месторождений Армении за 40 лет. Ереван, 1959.

Багдасарян А. Б. Географические исследования в Армянской ССР за 40 лет. «Известия» АН АрмССР, серия геолог. и геогр. наук, т. XIII, 6, Ереван, 1960.

Зарапов В. Х. Металлургическая промышленность Армении за 40 лет. Ереван, 1959.

Казанджян Т. Т. Очерки химии в Армении, Ереван, 1955.

Горький М. Собрание сочинений, т. 26, Москва, 1953.

Мелконян В. А. Металлургия меди в Армении, Москва, 1955.

Мергелян С. Н. Приближения функций комплексного переменного. Сбор. «Математика за сорок лет», т. I, Москва, 1959.

Մկրտչյան Ս. Ս. Успехи науки в исследовании геологического строения и минеральных богатств Армении. Журнал «Известия» АН АрмССР, серия геол. и геогр. наук, т. X, 4, Ереван, 1957.

- Мкртчян С. С. и Месропян А. И.** К истории развития геологических исследований в Армении за советский период. «Из истории естествознания и техники», I, Ереван, 1960.
- Мирзоян Л. В.** Бюраканская астрофизическая обсерватория. Изд-во АН СССР, 1958.
- Орбели И. А.** Вопросы и решения вардапета Ширакаци. Петроград, 1918.
- Петросян Г. Б. и Розенфельд Б. А.** Доказательство Аганиса V постулата Евклида. «Известия» АН АрмССР, серия физ.-мат. наук, I, Ереван, 1960.
- Саакян П. С.** (отв. редактор) Геологическая служба Армянской ССР за 25 лет, Москва-Ленинград, 1945.
- Тигранян С. Т.** Геологические работы армянского ученого А. Е. Арцруни. Труды Института истории естествознания и техники АН СССР, т. 37, вып. 2, Москва, 1961.
- Туманян Т. Г.** О таблице полигон. чисел Ширакаци. Сборник научных трудов Матенадарана, I, Ереван, 1941.
- Туманян Т. Г.** «Начала Евклида по древнеарм. источникам. Историко-математические исследования, выпуск VI, М, Ереван, 1953.
- Туманян Б. и Абрамян Р.** Об астрономических работах Анании Ширакаци. Историко-астрономические исследования, выпуск II, Москва, 1956.
- Чалоян В. К.** Естественно-научные воззрения Анании Ширакаци. Журнал «Византийский временник», XII, Москва, 1957.
- Юзбашян М. С.** Горнорудная промышленность АрмССР за 40 лет, Ереван, 1959.

ԱՍՏՐՈՅԻԶԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայ ժողովրդի պատմության մեջ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունները, մասնավորապես աստղագիտությունը, ներկայացված են միայն առանձին գիտնականների անուններով:

Դրանցից ամենանշանավորը Անանիա Շիրակացին է (VII դար), որի հատկապես տիեզերագիտությանը և մաթեմատիկային նվիրված աշխատանքների նշանակությունը դուրս է գալիս նեղ ազգային շրջանակներից:

Պատմական աղբյուրներից առաջժմ հայտնի չեն տվյալներ Հայաստանում որևէ աստղագիտարանի գոյության մասին: Չեն գտնվել նաև վկայություններ Հայաստանում կատարված այնպիսի աստղագիտական դիտումների մասին, որոնք ներկայացնեին ինքնուրույն գիտական արժեք:

Սակայն բացառված չէ այն հնարավորությունը, որի հին ձեռագրերի ուսումնասիրությունը հետագայում կարող է հանգեցնել երկնային արտակարգ երևույթների՝ նոր աստղերի բռնկումների կամ գիսավորների դիտումների վերաբերյալ հետաքրքիր տվյալների հայտնաբերմանը:

Գիտության զարգացման վիճակը առանձնապես անմխիթարական է եղել Հայաստանի քաղաքական անկախությունը կորցնելուց հետո:

Ճշգրիտ, հատկապես ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ Հայաստա-

նում ստեղծվում են միայն սովետական կարգեր հաստատվելուց հետո:

Այդ ուղղութեամբ վճռական նշանակութիւն ունեցաւ Երևանի Պետական համալսարանի ստեղծումը 1921 թվականի հունվարին:

Համալսարանի առաջին շրջանավարտները կոչված էին աշխատելու լուսավորութեան, կուլտուրայի և ժողովրդական տնտեսութեան ամենատարբեր բնագավառներում: Հետագայում, սակայն, առանձնահատուկ ուշադրութիւն է նվիրվում գիտական կարգերի պատրաստմանը:

Աստղագիտութեան բնագավառի մասնագետներ պատրաստելու նպատակով 1933—1934 ուսումնական տարում Համալսարանին կից կազմակերպվում է Երևանի Աստղագիտարանը: Վերջինս հիմնականում հետապնդում էր ուսումնական նպատակներ: Գիտողական հիմնական գործիքը 9-դասնական փիզիկա աստղագիտակն էր, որը պատկանում էր Լենինգրադի Համալսարանի Աստղագիտարանին և տրվել էր նորակառույց Աստղագիտարանին ժամանակավոր օգտագործման նպատակով: Լուսանկարչական դիտումների համար այդ դիտակի վրա տեղակայված էր երկու կամերա:

Որակյալ մասնագետների և գիտողական ժամանակակից գործիքների բացակայութեան պատճառով Երևանի Աստղագիտարանում իրենց գիտական նշանակութեամբ աչքի ընկնող գիտողական աշխատանքներ չեն կատարվել: Սակայն Աստղագիտարանի դիրեկտոր, Մոսկվայի համալսարանում աստղագիտական կրթութիւն ստացած Լ. Լ. Սեմյոնովի ղեկավարութեամբ Աստղագիտարանի սակավաթիվ աշխատակիցները կատարել են որոշ հետազոտութիւններ՝ նվիրված փոփոխական աստղերին, Արեգակի ակտիվութեանը, մետեորներին և Հայաստանում աստղագիտութեան պատմութեանը:

Միևնույն ժամանակ հետաքրքիր աշխատանքներ են կատարվել երկնային մեխանիկայի գծով (Գ. Կ. Բաղալյան):

Աստղագիտարանում այդ տարիներին կատարվող գիտական հետազոտութիւններին մասնակից են եղել նաև Լենինգրադի և Մոսկվայի մի քանի աստղագետներ:

1938 թվականին Երևանի Աստղագիտարանն անցնում է ՍՍՌԳ Գիտութիւնների ակադեմիայի Հայկական ֆիլիալի իրավասութեանը:

Շուտով Աստղագիտարանի գիտական ղեկավար է նշանակ-

վում Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Հ. Համբարձումյանը: Հենց այդ ժամանակ Աստղագիտարանը Լենինգրադի համալսարանի արհեստանոցներում պատվիրում է նոր, 16-դյույմանոց աստղադիտակ, որի կառուցումն ավարտվում է 1941 թ. հունիսին: Սակայն ֆաշիստական Գերմանիայի անակնկալ հարձակումը մեր երկրի վրա խափանում է գործիքի փոխադրումը Երևան:

Այդ տարիներին որոշ աշխատանքներ են կատարվում Աստղագիտարանի աշխատակիցների գիտական մակարդակի բարձրացման, ինչպես նաև աստղագիտական կադրերի ստեղծման ուղղությամբ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ստեղծումից (1943 թ.) և այդ կապակցությամբ Վ. Հ. Համբարձումյանի Երեվանում մշտական բնակություն հաստատելուց հետո աստղագիտության, հատկապես աստրոֆիզիկայի զարգացման համար Հայաստանում ստեղծվում են համեմատաբար բարենպաստ պայմաններ:

Ամենալուրջ խոչընդոտն այդ ճանապարհին մնում էր ժամանակակից գործիքներով հագեցված և աստրոֆիզիկական դիտումների համար անհրաժեշտ մթնոլորտային և կլիմայական պայմաններին բավարարող վայրում գտնվող աստղադիտարանի բացակայությունը:

1944 թվականին սկսվում են համապատասխան վայրի որոնումները նոր Աստղադիտարանի կառուցման համար: Փորձնական դիտումների վրա հիմնված երկու տարվա որոնումներից հետո ընտրվում է Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի շրջակայքը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ 1946 թվականին սկսվում է Բյուրականի աստղադիտարանի շինարարությունը՝ Արագած լեռան հարավային լանջին, Բյուրական գյուղից հարավ (Երևանից 30 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից շուրջ 1500 մ բարձրության վրա):

### ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Բյուրականի աստղադիտարանի շինարարությանը զուգընթաց 1946 թվականից զգալի աշխատանքներ են կատարվել գիտական կադրերի պատրաստման և դիտողական բազայի ստեղծման ուղղությամբ:

Սկզբնական շրջանում դիտողական աշխատանքի մահմանափակ հնարավորությունների հետևանքով ծանրակշիռ գիտական հետազոտություններ կատարվում էին միայն տեսական աստրոֆիզիկայի և վիճակագրական աստղագիտության բնագավառում: Սակայն աստիճանաբար շարք են մտնում դիտողական նոր գործիքներ, տեսական ու վիճակագրական հետազոտություններն ուղեկցվում են դիտողական աշխատանքներով, որոնց նշանակությունը և կշիռը Աստղադիտարանի գիտական գործունեության մեջ տարեցտարի աճում է:

Առաջին դիտողական գործիքը՝ 5 դյուլյմ տրամագծով կրկնակի աստրոգրաֆը, Բյուրականում տեղակայվել է 1946 թ. մայիսին: Այդ աստղադիտակի օգնությամբ կատարվել են փոփոխական աստղերի երկգույնանի լուսանկարչական դիտումներ, ինչպես այդ աստղերի, այնպես էլ միջաստղային կլանող նյութի ֆիզիկական ուսումնասիրության նպատակով:

Նույն թվականին Լենինգրադից ստացվում և տեղակայվում է Երևանի Աստղադիտարանի կողմից մինչև պատերազմը պատվիրված 16-դյուլյանոց դիտակը (Կասեգրենի և Շվարցիլդի ֆոկուսներով): Սակայն գործիքի օպտիկայում հայտնաբերված որոշ թերությունների շտկման նպատակով հաջորդ տարին այն կրկին վերադարձվում է Լենինգրադ:

1948 թվականի ամռանը հավաքվում և տեղակայվում է Շմիդտի սիստեմի առաջին աստղադիտակը (մուտքի բացվածքը՝ 8 դյուլյմ, իսկ հայելու տրամագիծը՝ 12 դյուլյմ), որի միջոցով կատարված դիտումները կարևոր դեր խաղացին աստղակույտների ուսումնասիրության տեսակետից:

Մեծ աստղադիտակների բացակայությունը Բյուրականում մասամբ փոխհատուցվում էր յուրօրինակ կոնստրուկցիաներ ունեցող դիտողական գործիքների միջոցով:

1949 թվականին տեղակայվում են այդպիսի երկու գործիք՝ 10-դյուլյանոց հայելիավոր դիտակ-սպեկտրոգրաֆը՝ աստղերի կարճալիքային (ուլտրամանուշակագույն) ճառագայթման ուսումնասիրության համար, և հզոր ներուլյար սպեկտրոգրաֆը՝ միզամածությունների սպեկտրների հետազոտության համար:

Այդ գործիքների և Շմիդտի սիստեմի աստղադիտակի օգնությամբ կատարվում են կարևոր նշանակություն ունեցող աստրոֆիզիկական հետազոտություններ, հատկապես, 1947 թվականին Բյուրականում հայտնագործված նոր տիպի աստղային սիստեմների՝

աստղասփյուռնների ֆիզիկական ուսումնասիրության ուղղությունները 1950 թվականին կենտրոնացրեց աստղաբանության և տեղակայվում է վերահասուցված 16-դասարանից աստղադիտակը, որն օգտագործվում է էլեկտրաֆոտոմետրիկ դիտումների համար՝ աստղերի և միգամածությունների գունաչափական ու բևեռաչափական ուսումնասիրության նպատակով:

1952 թվականին շարք է մտնում Աստղադիտարանում կառուցված նոր 6-դասարանից կրկնակի աստրոգրաֆը «Յեյսս»-ի օբյեկտիվներով՝ փոփոխական աստղերի գունաչափական դիտումների համար:

1954 թվականին տեղակայված Շմիդտի սիստեմի 21 դասարանից աստղադիտակը հնարավորություն տվեց ձեռնարկել արտագալակտիկ միգամածությունների կառուցվածքի և ճառագայթման առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Ինչպես Բյուրականի աստղադիտարանի, այնպես էլ սովետական աստղադիտության կյանքում նշանակալից իրադարձություն էր Շմիդտի սիստեմի, իր մեծությունը աշխարհում երկրորդ, մետրանոց աստղադիտակի տեղակայումը Բյուրականում 1960 թվականի ուշ աշնանը<sup>1</sup>: Այն լայն հնարավորություններ է ստեղծում մինչև այժմ եղած գործիքների համար անմատչելի հեռավոր աստղային սիստեմների, թույլ աստղերի և միգամածությունների ուսումնասիրության համար:

Սկսած 1950 թվականից Բյուրականի աստղադիտարանում դգալի զարգացում է ապրում նաև ռադիոաստղադիտությունը: Բնականաբար, առաջին տարիներին հիմնական ուշագրությունը նվիրվում է ռադիոաստղադիտակների կառուցմանը և դիտումների մեթոդների մշակմանն ու կատարելագործմանը:

Առաջին ռադիոաստղադիտական դիտումը (Արեգակի ռադիոճառագայթման) կատարվում է 1951 թվականին, 3 մ տրամագծով պարաբոլիկ հայելիաձև անտենա ունեցող դիտակի օգնությամբ՝ 50 սմ երկարության ալիքներում:

1952 թվականին սկսում է գործել կոսմիկական ռադիոճառագայթման կետային աղբյուրների դիտումների համար կառուցված ինտերֆերենցիոն ռադիոաստղադիտակը՝ 4,2 մ ալիքներում:

<sup>1</sup> Այդ դիտակի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1961 թ. մայիսի 8-ին, ՍՄԿՊ Կենտկոմի Առաջին քարտուղար և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովի այցելության ժամանակ:

Հետագայում կառուցվում են մի շարք նոր ռադիոաստղադի-  
տակներ (մեծ մասամբ ինտերֆերենցիոն) կետային աղբյուրների,  
ինչպես նաև Արեգակի ռադիոճառագայթման ուսումնասիրության  
համար՝ մետրանոց և դեցիմետրանոց ալիքներում:

Ռադիոաստղագիտական հետազոտություններն աստիճանա-  
բար կենտրոնացվում են Աստղադիտարանի՝ Բյուրական գյուղից  
հյուսիս կառուցված Սարավանդի ռադիոաստղագիտական կայա-  
նում, որը շարք է մտնում 1959 թվականին:

1957 թվականին Սարավանդի կայանում սկսվում է մետրանոց  
ալիքների համար նախագծված, ՄՍՌՄ-ում ամենախոշոր, 4500 մ<sup>2</sup>  
ընդհանուր մակերես ունեցող պարբերովի գլանային անտենաներով  
օժտված ինտերֆերենցիոն ռադիոաստղադիտակի կառուցումը,  
որը կանոնավոր շահագործման հանձնվեց 1950 թվականին:  
Նույն թվականին ավարտվեց մի այլ, փոփոխական բազուկ ունե-  
ցող, ինտերֆերենցիոն ռադիոդիտակի կառուցումը՝ դեցիմետրանոց  
ալիքների համար:

Ռադիոաստղադիտակների, ինչպես նաև աստրոֆիզիկական  
ու ռադիոֆիզիկական նոր նուրբ սարքերի ստեղծման ուղղությամբ  
հիմնական աշխատանքները կատարվել են Հայկական ՄՍՌ Գի-  
տությունների ակադեմիայի Բյուրականի Սպասքաշինության լա-  
բորատորիայի կողմից:

Ժամանակակից դիտողական գործիքներով Աստղադիտարանը  
զինելու հետ զուգահեռ զգալիորեն աճում է գիտական կոլեկտիվը,  
բարձրանում գիտական հետազոտությունների մակարդակը: Մեծ  
ուշադրություն է նվիրվում գիտական լաբորատորիաները կատարե-  
լագործված, ճշգրիտ չափողական գործիքներով՝ ապահովելուն,  
աստրոֆիզիկական հետազոտությունների նորագույն մեթոդների  
յուրացմանը, ներդրմանը, ինչպես նաև նորերի մշակմանը:

Աստղադիտարանի աշխատանքներում հատուկ տեղ է զբաղվում  
երիտասարդ մասնագետների պատրաստման գործը: Այդ տեսակե-  
տից կարևոր նշանակություն ունեցավ Երևանի Պետական համալ-  
սարանում 1949 թվականից աստրոֆիզիկայի բաժնի կազմակեր-  
պումը:

Աստրոֆիզիկական հետազոտությունների ընդլայնումը 1951  
թվականին հանգեցնում է Աստղադիտարանում մասնագիտական  
բաժինների կազմակերպմանը՝ աստղաբաշխության, սպեկտրոսկո-  
պիայի (ներկայումս աստղերի ու միգամածությունների ֆիզիկա-  
յի) և ռադիոաստղագիտության: 1959 թվականին կազմակերպվում

է ևս երկու բաժին՝ ռադիոֆիզիկական մեթոդների և սպասքաշի-  
նության:

Ռադիոֆիզիկական և ռադիոաստղագիտական աշխատանք-  
ների աճող պահանջներից ելնելով, 1960 թվականի երկրորդ կեսին  
Աստղադիտարանի ռադիոաստղագիտության և ռադիոֆիզիկական  
մեթոդների բաժինների բազայի վրա Գիտությունների ակադե-  
միայի կազմում ստեղծվում է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի  
ինստիտուտ:

Բյուրականի աստղադիտարանի գործունեության առաջին իսկ  
օրվանից դիտա-հետազոտական աշխատանքների պլանի հիմքում  
դրվում է Գալակտիկայի կառուցվածքի պրոբլեմը:

Սկսելով այդ կարևոր պրոբլեմից, Աստղադիտարանը համե-  
մատաբար կարճ ժամանակամիջոցում, հետազոտությունների  
բնական զարգացման հետևանքով, գիտական լուրջ հաջողություն-  
ների հասավ ժամանակակից աստրոֆիզիկայի ամենատարբեր  
ձյուղերում: Այդ հաջողությունները պայմանավորված էին նախ և  
առաջ այն բանով, որ Աստղադիտարանը ձգտում էր լուծել հրա-  
տապ գիտական խնդիրներ: Նրանցից յուրաքանչյուրի լուծումից  
հետո հնարավորություն էր ծագում առաջ քաշել և լուծել նոր, ա-  
ռաջնահերթ խնդիրներ: Աստղադիտարանի գիտական գործունեու-  
թյան համար բնորոշ այդ նպատակասլացություն և հետևողականու-  
թյան մասին ակնառու կերպով վկայում է Աստղադիտարանում  
կատարված աստրոֆիզիկական հետազոտությունների ամբողջ ըն-  
թացքը:

Այսպես, օրինակ, Գալակտիկայի կառուցվածքի ուսումնասի-  
րություն համար չափազանց կարևոր էր միջաստղային կլանող  
միջավայրի հետազոտությունը: Կլանող միջավայրի առկայության  
պատճառով աստղերի, միզամածությունների, նրանց պայծառու-  
թյունների տեսանելի բաշխումները խիստ տարբերվում են իրա-  
կան բաշխումներից: Տեսանելի բաշխումներից իրական բաշխում-  
ներին անցնելու համար անհրաժեշտ է գիտենալ միջաստղային  
կլանող նյութի տարածական բաշխումը, նրա ֆիզիկական ու երկ-  
րաչափական հատկությունները, լույսի միջաստղային կլանման  
օրենքը:

Բյուրականի աստղադիտարանի առաջին աշխատանքները  
նվիրված էին հենց այդ խնդիրների լուծմանը: Այդ աշխատանքնե-  
րը շուտով հանգեցրին Գալակտիկայում տարբեր ֆիզիկական դա-  
սերի աստղերի իրական տարածական բաշխման օրինաչափույուն-  
ների բացահայտմանը:

Պարզվեց, որ որոշ դասերի աստղեր հանդիպում են գերազանցապես ֆիզիկական խմբերի ձևով: Աստղերի տարածական բաշխման այդ առանձնահատկության խոր ուսումնասիրությունը, նրանց ֆիզիկական հատկությունների հետ ունեցած նրա սերտ կապի լույսի տակ, հիմք ծառայեց գիտական և աշխարհայեցողական մեծ նշանակություն ունեցող հայտնագործման՝ աստղասփյուռների հայտնագործմանը:

Աստղադիտարանի գործունեության հետագա զարգացումը, մեծ մասամբ, կանխորոշվեց այդ հայտնագործմամբ: Աստղասփյուռների, նրանց կազմում դիտվող աստղերի և միգամածությունների հետազոտությունները հիմնական տեղ էին զբաղում Աստղադիտարանի աշխատանքներում: Աստղասփյուռների ուսումնասիրության գործում Բյուրականի աստղադիտարանը վճռական դեր խաղաց:

Աստղասփյուռներ կազմող աստղերը երիտասարդ գոյացումներ են, և դեռևս չեն հասել կայուն, հավասարակշիռ վիճակների: Այդ է պատճառը, որ նրանց մթնոլորտներում և արտաքին շերտերում տեղի են ունենում զարգացման հետ կապված բուռն պրոցեսներ:

Այդ փաստը ելակետ հանդիսացավ Աստղադիտարանի այն հետազոտությունների համար, որոնք նվիրված էին ֆիզիկապես անկայուն (ոչ ստացիոնար) աստղերի և նրանց հետ կապված միգամածությունների ուսումնասիրությանը: Մի շարք կարևոր գիտական արդյունքներ, որոնք հետևանք են այդ ուսումնասիրության, վերաբերում են աստղային էներգիայի աղբյուրների պրոբլեմին:

Ինչպես պարզվեց այդ աշխատանքներով, որոշ անկայուն գոյացումների համար բնորոշ է ռադիոալիքներում ուժեղ ճառագայթման հատկությունը:

Շենց այդ կապակցությամբ էր, որ Աստղադիտարանում անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին ռադիոաստղագիտական հետազոտությունների զարգացման համար:

Կոսմիկական ռադիոճառագայթման աղբյուրներ են մի շարք աստղային սիստեմներ՝ գալակտիկաներ, որոնք դիտվում են մեծ հեռավորությունների վրա: Այդ փաստից ելնելով, Աստղադիտարանում աշխատանքներ ծավալվեցին արտաքին գալակտիկաների բազմակողմանի ուսումնասիրության ուղղությամբ:

Աստղադիտարանում ստացված գիտական արդյունքները վկայում էին այն մասին, որ որոշ դեպքերում անկայուն աստղերի,

նրանց հետ կապված, այսպես կոչված, գիսավորածև միգամածութ-  
յունները, ինչպես նաև մի շարք արտագալակտիկ գոյացումների  
ճառագայթումը շերմային բնույթի չէ և պայմանավորված է նյութի,  
գիտությունն առայժմ անհայտ, հավանաբար գերխիտ վիճակի  
հատկություններով:

Վերջին երկու տարում տեսական հետազոտություններ կա-  
տարվեցին աստղերի հնարավոր գերխիտ հավասարակշիռ վիճակ-  
ների ուսումնասիրության դժուր, որոնք հանգեցրին հիպերոնային-  
բարիոնային աստղերի տեսության մշակմանը:

Միջաստղային կլանող նյութի, աստղերի ու միգամածություն-  
ների ֆիզիկայի, աստղերի ու աստղային սիստեմների կառուց-  
վածքի, առաջացման ու զարգացման պրոբլեմներին նվիրված իր  
հետազոտությունների շնորհիվ Բյուրականի աստղադիտարանը  
գուրս եկավ աշխարհի առաջավոր աստղադիտարանների շարքը և  
արժեքավոր ավանդ մտցրեց համաշխարհային գիտության մեջ:  
Ներկայումս Աստղադիտարանն զգալի դեր է խաղում աստրոֆիզի-  
կայի զարգացման գործում:

Աստղադիտարանի գործունեության ծավալման ճանապարհին  
հիմնական արգելակը տարիներ շարունակ եղել է դիտողական  
գործիքների ոչ բավարար հզորությունը: Այդ կապակցությամբ մեծ  
ուշադրություն է նվիրվել Աստղադիտարանը խոշոր դիտակներով  
զինելու հարցին: Այդ ճանապարհին ամենախոշոր հաջողություն-  
ները ձեռք են բերվել միայն ամենավերջին ժամանակներս, երբ  
Բյուրականում տեղադրվեցին Շմիդտի սիստեմի մետրանոց աստղա-  
դիտակը և ՍՍՌՄ-ում առայժմ ամենախոշոր ինտերֆերենցիոն ու-  
դիոաստղադիտակը: Այդ բանը, անկասկած, վճռական նշանակու-  
թյուն կունենա աստրոֆիզիկայի ամենահրատապ խնդիրների լուծ-  
ման գործում Աստղադիտարանի դերի հետագա բարձրացման հա-  
մար:

## ԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Լույսի ցրման տեսություն. — Գործնական և տեսական լայն  
կիրառություններ ունի պղտոր միջավայրում լույսի ցրման նոր  
տեսությունը: Լույսի ցրման խնդրի նախկինում տրված բոլոր լու-  
ծումներն ստացվում էին չափազանց բարդ ինտեգրալ հավասա-  
րումներից և միայն մոտավոր էին: Նոր տեսության մեջ պղտոր  
միջավայրում լույսի ցրման խնդրի լուծման հիմքում դրվեց այդ

նպատակով ձևակերպված, այսպես կոչված, ինվարիանտության սկզբունքը: Ինվարիանտության սկզբունքի կիրառմամբ լույսի ցրման խնդիրը բերվեց պարզ տեսքի ֆունկցիոնալ հավասարումների սխեմի, որն ունի ճշգրիտ և լրիվ լուծում:

Ինքը՝ ինվարիանտության սկզբունքը հզոր միջոց հանդիսացավ մոլորակների, աստղերի և Արեգակի մթնոլորտների հատկությունների հետ կապված խնդիրների լուծման համար:

Ինվարիանտության սկզբունքը լայնորեն օգտագործվեց լույսի բազմապատիկ ցրման գծով ՍՍՌՄ-ում և արտասահմանում կատարված մի ամբողջ շարք հետազոտությունների համար, որոնք կարեվոր գործնական կիրառություններ գտան աստրոֆիզիկայում, ֆիզիկայում և գեոֆիզիկայում: Ինվարիանտության սկզբունքը հետաքրքիր կիրառություն ունեցավ նաև Բյուրականում մշակված ֆլյուկտուացիաների տեսության մեջ:

2. Ֆլյուկտուացիաների տեսություն.— Միջաստղային կլանող նյութի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրության շատ էֆեկտիվ միջոց հանդիսացավ երկնակամարի վրա աստղերի և արտագալակտիկ միզամածությունների տեսանելի բաշխման, Միք Կաթնի պայծառության բաշխման մեջ դիտվող ֆլյուկտուացիաների տեսությունը: Այդ տեսության հիմքը կազմում է հետևյալ գաղափարը: Աստղերի ու արտագալակտիկ միզամածությունների, ինչպես նաև Միք Կաթնի պայծառության բաշխման, Գալակտիկայի և Մետագալակտիկայի կառուցվածքի ընդհանուր առանձնահատկություններով պայմանավորված շեղումները՝ հավասարաչափ բաշխումից պետք է արտահայտվեն տիրույթի գալակտիկ կոորդինատներից կախված բավական սահուն փոփոխություններով: Մինչդեռ Գալակտիկայում աստղերի, Մետագալակտիկայում գալակտիկաների ֆիզիկական սխեմաների առկայությամբ, ինչպես նաև միջաստղային կլանող նյութի պատառածե՛լ ամպա՛ձև կառուցվածքով պայմանավորված զգալի շեղումներ՝ հավասարաչափ բաշխումից դիտվում են նաև երկնակամարի միևնույն տիրույթի սահմաններում:

Այդ վերջին հանգամանքով, Գալակտիկայում կլանող նյութի ամպաձև կառուցվածքով, պայմանավորված շեղումների՝ ֆլյուկտուացիաների տեսությունը թույլ տվեց մի կողմից՝ բացահայտել աստղերի և գալակտիկաների տարածական բաշխման ընդհանուր առանձնահատկությունները և մյուս կողմից՝ պարզել միջաստղային կլանող նյութի կառուցվածքը: Այդ տեսության կիրառումը դիտո-

դական տվյալներին նկատմամբ հնարավորութիւն տվեց որոշելու միջաստղային կլանող միջավայրը կազմող, առանձին մութ միգամածութիւնների՝ ամպերի ֆիզիկական և երկրաչափական պարամետրերը (միջին շափեր, կլանման միջին ունակութիւն և այլն):

Ֆլյուկտուացիաների տեսութիւնը Բյուրականի աստղադիտարանում հետազայում զարգացվեց աստղերի և գալակտիկաների տարածական բաշխման մեջ եղած բնական ֆլյուկտուացիաների ու Գալակտիկայում ցրված լույսի հաշվառման իմաստով: Այն զգալի նշանակութիւն ունեցավ Գալակտիկայի կառուցվածքի և նրա ներսում տարբեր ֆիզիկական դասերի գոյացումների բաշխման օրինաչափութիւնների ուսումնասիրութեան տեսակետից: Այդ տեսութիւնը շատ հետեորդներ ունի մեր երկրում և արտասահմանում:

3. Աստղասփյուռներ. — Գալակտիկայում և սպիրալաձև այլ գալակտիկաներում նոր տիպի աստղային խմբավորումների՝ աստղասփյուռների հայտնագործումը կարևոր ելակետ հանդիսացավ աստղերի ու աստղային սիստեմների առաջացման և զարգացման հարցերի քննարկման ու լուծման համար, ուժեղացրեց աստղային կոսմոգոնիայում մատերիալիստական ուղղութիւնը:

Աստղասփյուռների բազմակողմանի ուսումնասիրութեան հիման վրա մշակված այդ տեսութիւնը շափաղանց բեղմնավոր դուրս եկավ ու բազմաթիվ կիրառութիւններ գտավ սովետական և արտասահմանյան գիտնականների՝ աստղային կոսմոգոնիային և Գալակտիկայի կառուցվածքին նվիրված բազմաթիվ հետազոտութիւններում:

Բացի կուլտուրական բույսերի վրա պարագիտային կյանք վարող սնկերից, վերջին ժամանակներս հետազոտվել են նաև անտառային բուսականութեանը, քաղաքների կանաչապատ գոտիների ծառերին, թփերին ու ծաղկավոր բույսերին մեծ վնասներ հասցնող սնկերի կենսաբանական առանձնահատկութիւնները և մշակվել են այդ հիվանդածին սնկերի դեմ էֆեկտիվ միջոցառումներ (Ավագյան, Հարութիւնյան, Բաբայան, Սոֆյան, Սարգսյան և ուրիշներ): Հայաստանի բուսաբանները, տարբեր աշխարհագրական պայմաններին հարմարված բույսերի բնորոշ կենսաբանական հատկանիշների դրսևորման գործում զգալի նվաճումներ ձեռք բերելու հետ մեկտեղ, նաև ծավալուն ու բեղմնավոր աշխատանքներ են կատարել զանազան արժեքավոր տեսակի ծառեր, թփեր, ծաղկատունկեր իրենց բնական պայմաններից տարբեր. բուրոսվին նոր պայմաններում աճեցնելու, հարմարեցնելու ուղղութեամբ: Այդ ճանապարհով էլ հարստացվել են, օրինակ, Երևանի և ռեսպուբլիկայի մի շարք վայրերի բուսաբանական այգիների կենդանի բուսական կազմը և ֆոնդը: Այդ ուղղութեամբ շնորհակալ աշխատանք են կատարել Ե. Ղազարյանը, Հ. Մաղաքչյանը, Գ. Յարոշենկոն, Ա. Արարատյանը, Զ. Աստվածատրյանը, Տ. Զուբարյանը, Հ. Մկրտչյանը, Ա. Հախվերդյանը Ն. Միրզոյան և ուրիշներ:

Հայաստանի բուսական ծածկոցի բնորոշ առանձնահատկութիւնները պարզաբանելու շնորհիվ նաև հնարավոր դարձավ ի հայտ բերելու այնպիսի տարատեսակ բույսեր, որոնք օժտված են տնտեսական շահագանց կարևոր հատկանիշներով (եթերայնուկութեամբ, ալկոլոիդատիվութեամբ և բակտերիոցիդ նյութեր ու արժեքավոր միտամիներ արտադրելու հատկութեամբ և այլն): Ներկա-

յումս դրանցից շատերը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում, մասնավորապես գործնական բժշկության մեջ, լայն կիրառում են գտել: Այդ ուղղությամբ արժեքավոր աշխատանքներ են կատարել Հ. Սեփեթչյանը, Զ. Աստվածատրյանը, Ա. Խրիմլյանը, Ս. Թամամշյանը, Ս. Զոլոտնիցկայան, Պ. Յարոշենկոն և շատ ուրիշներ:

Հայաստանի բուսաբաններից հատկապես մեծ ծառայություններ է մատուցել պրոֆ. Ս. Թախտաջյանը: Նա իր գիտական գործունեության 25 տարիների ընթացքում ոչ միայն տվել է բույսերի ծագմանը, զարգացման էվոլյուցիային, աշխարհագրական հատկություններին վերաբերող բազմաթիվ շատ արժեքավոր մենագրական աշխատություններ, այլև պատրաստել է մի խումբ շնորհալի բուսաբաններ, որոնք իրենց աշխատություններով հարստացրել են Հայաստանի բուսականության վերաբերյալ մեր գիտելիքները:

2. Կենդանաբանություն: Հայկական լեռնաշխարհը, որն աչքի է ընկնում իր բուսական ծածկոցի բազմազանությամբ, ունի շատ յուրահատուկ կենդանիների խմբակցություններ:

Կենդանաբանական հետազոտությունները Հայաստանում սերտորեն կապված են սովետական կարգերի հաստատման հետ: Մինչ այդ Հայաստանում կենդանաբանության ուղղությամբ գիտական աշխատանքներ չէին կատարվում և գիտական կենտրոններ չկային: Հայաստանում առաջին հիմնարկը, որտեղ կատարվում էին կենդանաբանական հետազոտություններ, հանդիսացել է Հայկական ՍՍՌ Բնագիտական թանգարանը, որի կազմակերպման և ցուցադրական նյութերի հավաքման գործում անգնահատելի աշխատանքներ է կատարել իր ժամանակի խոշորագույն բնասեր, անխոնջ պրպտող Ա. Շելկովնիկովը: Եթե մինչև 1935 թվականը Հայաստանի կենդանական աշխարհի հետազոտությունները կթել են լուրջ նյութեր հավաքելու և մասամբ էլ համակարգելու բնույթ, ապա 1935 թվականին, Համամիութենական Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի կազմակերպման շնորհիվ, հնարավորություն ստեղծվեց նրա Բիոլոգիական ինստիտուտի սխտեմում կազմակերպելու կենդանաբանության հատուկ գիտահետազոտական հիմնարկ, որտեղ կենդանաբանությանը վերաբերող շատ հարցեր սկսեցին ավելի ծավալուն կերպով մշակվել: Այդ հիմնարկի աշխատանքներն սկզբնական շրջանում գլխավորեց պրոֆ. Ս. Յուզբաշյանը: Նրա աշխատանքներին ակտիվ մասնակցեցին ոչ միայն հայ կենդանաբաններ Ա. Տեր-Պողոսյանը, Հ. Ավետյանը, Գ. Ա-

վագյանը, Մ. Տեր-Գրիգորյանը, այլև ուս գիտնականներ՝ Ա. Արգիրոսյանը, Ս. Զերնովը, Բ. Գումիլևսկին, Յ. Զայցևը, Ն. Կիրիչենկոն, Մ. Շիրկովսկին, Յա. Իզմայլովը, Գ. Սոսնինը և ուրիշներ:

Հայաստանի կենդանաբանների առաջին գործը եղավ ճանաչել Հայկական լեռնաշխարհում բնակություն հաստատած կենդանիներին, ծանոթանալ նրանց առանձնահատկություններին, որի շնորհիվ հետագայում հնարավոր դարձավ մշակել կենդանիների կարգաբանությունը: Այդ բնագավառում կարևոր աշխատանքներ են կատարել Մ. Տեր-Մինասյանը (երկարակնճիթ բզեզների կարգաբանություն), Ս. Դալը, Գ. Սոսնինը (թռչունների կարգաբանություն), Ն. Պլավիլչիկովը (փայտահատ բզեզներ), Յ. Ռիխտերը, Դ. Օզլուրլինը, Ա. Ռեյխարդը և ուրիշներ: Հրապարակված են երկարակնճիթավորների, փայտահատ բզեզների, կոկոսիտների, թռչունների որոշիչներ: Առանձնապես կարևոր ուսումնասիրություններ են կատարվել Հայաստանում տարածված ողնաշարավորների առանձնահատկությունների պարզաբանման ուղղությամբ, ճշտվել են նրանց տարածման արեալները, դոնայականության նշանակությունը և, որ կարևոր է, մարդու համար օգտակար տեսակների կազմը:

Ավելի ուշ, մեծ թափ են ստանում Հայաստանում տարածված անողնաշարավորների ուսումնասիրությունները: Այդ ուսումնասիրությունների շնորհիվ հայտնաբերվեցին նոր տեսակի անողնաշարավորներ, ճշտվեց մի շարք խմբերի տեսակային կազմը: Հայաստանում վերջին մի քանի տարիների ընթացքում ընդհանուր ֆաունիստական աշխատանքներին զուգընթաց սկսեցին ավելի ուժեղանալ նաև պարազիտոֆաունայի և օգտակար կենդանիների կլիմայավարժման ու հիբրիդացման, էվոլյուցիոն մորֆոլոգիայի ուղղությամբ կատարվող աշխատանքները:

Հայաստանի կենդանաբանների ջանքերի շնորհիվ ավելի հարստացավ Հայաստանի կենդանիների, մասնավորապես կաթնասունների և թռչունների կոլեկցիան: Ս. Դալը հետաքրքիր և կարևոր հետազոտություններ է կատարել Հայաստանի հին պատմական շրջաններում ապրած կենդանիների առանձնահատկությունների պարզաբանման բնագավառում, հենվելով հնէաբանության ուղղությամբ կատարված պեղումների վրա:

Հայաստանի կենդանաբանների ակտիվ միջամտության և ամբիջական մասնակցության շնորհիվ հնարավոր դարձավ ռեսպուբ-

լիկայի բնական պայմաններին հարմարեցնել մի շարք արժեքավոր կաթնասուններ և թռչուններ, ինչպես, օրինակ, նուորիա, արծաթափայլ աղվես, բծավոր եղջերու, փասիան և այլն (Ս. Յուզբաշյան, Ա. Մալխասյան, Ա. Սարգիսով, Ա. Զիլինգարյան): Եթե մինչև վերջին ժամանակներս Հայաստանում տարածված սողունների կենսաբանական առանձնահատկությունների ուղղությամբ շատ քիչ հետազոտություններ էին կատարվել, ապա ներկայումս նրանց ուսումնասիրություններն ավելի խորացել են և նոր բնույթ ստացել: Դրա շնորհիվ էլ ոչ միայն պարզաբանվել են նրանց տարածման արեալները, էկոլոգիական բնորոշ կողմերը, այլ նաև բնախոսական մի շարք նոր հատկանիշներ, որոնք նոր են կենդանաբանություն համար: Ընդհանուր կենսաբանական հետաքրքրություն են ներկայացնում Բ. Դարևակու կողմից նկարագրված ժայռամողեսների մի քանի այլատեսակներ, որոնք ունեն բազմացման շատ յուրահատուկ բնույթ: Նրանք բազմանում են բնական պարտենոգենետիկ ճանապարհով:

Ժողովրդական տնտեսության մեջ և, առհասարակ, մարդու կյանքում, առանձնապես վնասակար դեր են խաղում կրծողները: Նրանցից շատերը հանդիսանում են ոչ միայն մի շարք հիվանդությունների տարածողներ, այլև մեծ վնասներ են պատճառում գյուղատնտեսական կուլտուրաներին: Այդ պատճառով էլ տարիներ շարունակ Հայաստանի կենդանաբանների ուշադրության կենտրոնում են եղել ռեսպուբլիկայում տարածված կրծողները: Այդ են ապացուցում կրծողների տեսակային կազմին, նրանց կենսաբանական առանձնահատկությունների պարզաբանմանը վերաբերող այն բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատությունները, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ կրծողների դեմ պայքարի էֆեկտիվ միջոցներ մշակել: Այդ ուղղությամբ կարևոր աշխատանքներ են կատարել Մ. Շիրլովսկին, Մ. Դալը, Խ. Զաքարյանը, Ա. Պողոսյանը, Տ. Սոսնիխինան, Պ. Ղամբարյանը, Բ. Մարտիրոսյանը, Ս. Պապանյանը և ուրիշներ:

Հայաստանի կենդանական աշխարհի պահպանման համար կարևոր նշանակություն ունի արգելանոցների և որսորդական տնտեսության ռացիոնալ կազմակերպումը: Այս ուղղությամբ Հայաստանի կենդանաբանները զգալի աշխատանքներ են կատարել:

Կենդանաբանության ինստիտուտը մշակել է Հայաստանի օգտակար կենդանիների պահպանման և վերականգնման որոշ մի-

շոցառումներ, որոնք կիրառվում են պետական վերադաս մարմինների որոշումների համաձայն:

Արդեն որոշակի է, որ երկրի անողնաշարավորների 90% -ը կազմում են միջատները, որոնց տեսակների թիվը Հայաստանում հասնում է 15—16 հազարի: Միջատների վերաբերյալ արժեքավոր հետազոտություններ են կատարել Ն. Ակրամովսկին (Ճպոտներ), Գ. Ավագյանը (ուղղաթևավորներ), Ս. Խնձորյանը (բզեզներ), հետազոտվել են Հայաստանի կարիճների, աղոթարարների, լվիճների, միօրինակների, ուղտիկների, ծղրիզների, ցանցաթաղանթավորների, վտակիկների, մլուկների, բզեզներից՝ բեջեկների, ախանջամտուկների և այլ միջատների խմբերին պատկանող անողնաշարավորները (Բ. Իոֆֆ, Մ. Իվանովա, Ա. Թումանյան, Օ. Մարտինովա և ուրիշներ):

Հավասարաթևավորների կարգից մանրամասն ուսումնասիրվել են որդանները և վահանակիրները (Մ. Տեր-Գրիգորյան), որոնք գյուղատնտեսության համար կարևոր նշանակություն ունեն: Հետազոտվել են նաև որդան կարմիրի կենսաբանական առանձնահատկությունները (Հ. Ավետյան): Մեծածավալ հետազոտություններ են կատարվել նաև լվիճների կարգի միջատների կենսաբանական առանձնահատկությունները պարզաբանելու ուղղությամբ (Հ. Ավետյան, Հ. Թումանյան), ինչպես նաև մշակվել են գյուղատնտեսական կուլտուրաների շարժքը հանդիսացող այդ լվիճների գեմ պայքարելու միջոցները:

Հետաքրքիր ուսումնասիրություններ են կատարվել նաև թեփուկաթևավոր միջատների կենսաբանական առանձնահատկությունների պարզաբանման ուղղությամբ (Ս. Վարդիկյան): Այս կարգի միջատներից Հայաստանում կան մոտ երեք հազար տեսակ թիթեռ:

Առանձնապես լայնորեն ուսումնասիրվել է երկթևանի միջատների կարգից արյունածուծ մլակների կենսաբանությունը (Հ. Տերտերյան, Ա. Ռուբցով):

Ռեսպուբլիկայի կենդանաբանները բազմակողմանիորեն ուսումնասիրել են Հայաստանի կուլտուրական բույսերին, անտառածառատեսակներին, պտղատու ծառերին, քաղաքները կանաչապատող թփերին ու տնկիներին մեծ վնաս հասցնող միջատների (Հ. Ավետյան, Գ. Ավագյան, Մ. Տեր-Գրիգորյան, Ս. Խնձորյան) կենսաբանական առանձնահատկությունները:

Հայաստանի անողնաշարավորներից հետազոտվել են նաև տետրանիխոիդ և հարթ տղերը (Ա. Բաղդասարյան):

Առանձնապես կարևոր նշանակություն ունեն էքտոպարազիտ տղերի կենսաբանական բնորոշ կողմերի ուսումնասիրությունները (Ա. Տեր-Պողոսյան, Ռ. Սիմոնյան), որոնք հնարավորություն են տալիս մշակելու այդ պարազիտների դեմ պայքարի միջոցներ:

Հետաքրքիր և արժեքավոր հետազոտություններ են կատարվել Հայաստանում տարածված խիտունջների կենսաբանական առանձնահատկությունների պարզաբանման ուղղությամբ (Ն. Ակրամովսկի): Գործնական և տեսական կարևոր նշանակություն ունեն նաև այն աշխատությունները, որոնք վերաբերում են որդերի կենսաբանական հատկանիշների պարզաբանմանը: Հատկապես լայնորեն հետազոտվել են գյուղատնտեսությանը մեծ վնասներ պատճառող նեմատոդները (Հ. Պողոսյան), կենդանիների համար պարազիտ որդերի կենսաբանական հատկանիշները (Մ. Ալոյան, Պ. Սվաչյան, Կ. Հախումյան, Գ. Գրիգորյան), ինչպես նաև ուսումնասիրվել են կենդանիներին այդ որդերից պաշտպանելու միջոցառումների մշակման հարցերը: Հատկապես տնտեսական կարևորություն են ներկայացնում պարազիտների հանդեպ կենդանիների իմուն հատկությունների բարձրացման վերաբերյալ աշխատանքները (Է. Գավթյան և ուրիշներ):

Հ. Տերտերյանը պարզաբանել է զազիրքներից Հայաստանում տարածված քոռուկների ֆենոլոգիան, նրանց վնասատվության աստիճանը—շարժման գործունեության գոտիներն ու օջախները և, որ կարևորն է, մշակել է նրանց դեմ պայքարի միջոցները:

Հ. Ավետյանը հետազոտել է շալաների կենսաբանական հատկանիշները, նրանց վնասատվության աստիճանը և մի շարք այլ հատկանիշներ, որոնք տնտեսական կարևոր նշանակություն ունեն:

Է. Գավթյանը և նրա աշխատակիցները մանրամասն բացահայտել են ֆասցիոլոզների կենսաբանական առանձնահատկությունները և դրա շնորհիվ մշակել են այդ պարազիտների դեմ էֆեկտիվ պայքարի միջոցները: Այդ պարազիտները Հայաստանում, մասնավորապես Արարատյան հարթավայրի պայմաններում, մեծ վնաս են հասցնում բնտանի կենդանիներին: Հետազոտվել են նաև ֆասցիոլոզների միջնորդ տերերի էկոլոգիական և կենսաբանական հատկանիշները և մշակել են վերջիններիս դեմ պայքարի միջոցները (Պ. Սվաչյան, Ն. Ակրամովսկի):

Ներկայումս ավելի խորը հետազոտական աշխատանքներ են կատարվում կենդանիների և պարազիտ որդերի փոխհարաբերության ընդլայնվող պարզաբանելու ուղղությամբ, մասնավորապես, մեծ ուշադրություն է դարձվել օրգանիզմի ֆերմենտատիվ զործունեության, վիրամիկների և հանքային նյութերի փոխանակման առանձնահատկությունների պարզաբանման հարցերին: Այդ հետազոտությունները շատ կարևոր նշանակություն կարող են ունենալ պարազիտ որդերի դեմ պայքարի ավելի էֆեկտիվ միջոցներ մշակելու համար:

Վերջին ժամանակներս Հայաստանի կենդանաբանները կարեւոր աշխատանքներ են ձեռնարկել կենդանիների կլիմայավարժման և հիբրիդացման ուղղությամբ. կատարվում են բազմաբնույթ փորձնական աշխատանքներ (Ա. Զիլինգարյան, Ն. Պավլով, Յու. Մաղաքյան), որոնց միջոցով պարզաբանվելու են հետերոզիսի, ինչպես նաև ժառանգականության մի շարք այլ հարցեր, որոնք անկասկած, տեսական և գործնական կարևոր նշանակություն կարող են ունենալ:

3. Մանրէաբանություն (միկրոբիոլոգիա): Սովետական Հայաստանում մանրէաբանության, որպես գիտության զարգացումը նույնպես սերտորեն կապված է Սովետական Ռուսաստանում և միութենական մյուս սեպտուբրիկաներում մանրէաբանության զարգացման հետ:

Սովետական Հայաստանում մանրէաբանության զարգացման առաջին էտապում, պրոֆ. Պ. Քալանթարյանի ղեկավարությամբ, ծավալուն աշխատանքներ կատարվեցին գյուղատնտեսական մանրէաբանության կազմակերպման, հողի բերրիության և գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման հետ անմիջականորեն կապված արտակարգ կարևորություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ:

Հայաստանի մանրէաբանները, տարիներ շարունակ, հիմնականում, ղեաղվել են հողի բերրիության աստիճանը զրսեորող մանրէաբանական պրոցեսների ուսումնասիրությամբ: Այդ աշխատանքների ընթացքում որոշվեց առանձին հողատիպերում բնակվող միկրոօրգանիզմների տեսակային կազմը, բացահայտվեցին հողերի բերրիության համար շատ կարևոր նրանց բնախոսական խմբերի կենսաբանական առանձնահատկությունները: Մասնավորապես, նման հետազոտությունների (Պ. Քալանթարյան, Հ. Փանոսյան, Ա. Պետրոսյան, Ռ. Միրզաբեկյան, Ա. Կիրակոսյան,

Ա. Մեհրաբջան և ուրիշներ) շնորհիվ պարզվեց, որ Հայաստանի տարբեր կլիմայական պայմաններում գտնվող զանազան բնույթի հողատիպերը ոչ միայն տարբեր ֆիզիկա-քիմիական կազմ, այլև շատ յուրահատուկ միկրոօրգանիզմներից կազմված միկրոֆլորա ունեն:

Հողում բնակվող և բույսերի սննդաուսթյանն անմիջականորեն գործուն մասնակցութիւնն ցույց տվող մանրէներից կարևորները, ինչպես հայտնի է, օդի գազային ազոտով սնվող մանրէներն են: Հենց դրա համար էլ Հայաստանի մանրէաբանների կողմից մանրամասնորեն հետազոտվեցին Հայաստանի հողերում բնակվող այդ խմբերը՝ ազոտաբաղադրանքները և պալարաբաղադրանքները:

Այսպես, օրինակ, Պ. Քալանթարյանի և Հ. Փանոսյանի հետազոտութիւններից պարզվել է, որ եթե ազոտաբաղադրանքը զարգանում են հողային բաղադրանքներից՝ գազ առաջացնողների հետ մեկտեղ, ապա ավելի մեծ ինտենսիվութեամբ են օդից ազոտ յուրացնում, քան առանց նրանց: Իսկ եթե այդ ազոտաբաղադրանքը զարգանում են հողային մի քանի տեսակի ճառագայթասնկերի հետ, նրանց ձևա-բնախոսական հատկանիշների մեջ խոր փոփոխութիւններ առաջացնելով, որոշ պայմաններում նրանց ազոտ ֆիքսելու ունակութիւնը համարյա չի փոխվում (Ա. Բաշինսկայա, Ա. Պետրոսյան), մի այլ դեպքում, նրանց ազոտ ֆիքսելու ունակութիւնը նույնպես բարձրանում է (Հ. Փանոսյան):

Պ. Քալանթարյանը և Ա. Պետրոսյանը իրենց հետազոտութիւններով պարզեցին, որ պալարաբաղադրանքների ազոտ ֆիքսելու ունակութեան վրա մեծ ներգործութիւն է անում նաև էներգիայի համար օգտագործվող նյութի բնույթը, որը փոխում է ոչ միայն ազոտաբաղադրանքների ազոտ կապելու հատկանիշը, այլև նրանց ձևավա-բնախոսական բնորոշ առանձնահատկութիւնները:

Հայաստանի հողերի միկրոֆլորայի, նրա առանձին բնախոսական խմբերի բնութագրման աշխատանքներում մեծ տեղ են զբաղում և տեսական ու գործնական կարևոր նշանակութիւն ունեն Հայաստանի ազակալած հողերին վերաբերող հետազոտութիւնները (Հ. Փանոսյան): Այդ ուղղութեամբ կատարված աշխատանքները ցույց են տվել, որ Հայաստանի աղուտները հարուստ միկրոֆլորա ունեն, նշված հողերում ինտենսիվ միկրոբիոլոգիական պրոցեսներ են տեղի ունենում և, որ կարևորն է, այդ միկրոֆլորան չափազանց յուրահատուկ կողմեր ունի: Բացի դրանից, պարզվել է, որ ազակալած հողերում բնակվող շատ տեսակի միկրոօրգա-

նիզմներ ակտիվ մասնակցութիւն են ցուցաբերում հողի լուծվող աղերի փոխակերպման պրոցեսներում, մասնավանդ այն դեպքում, եթե այդ հողերի մեջ դրսից զանազան նյութեր են մուծվում, մասնավորապես՝ գիպս, ծծումբ և ծծմբային հրաքար: Աղակալած հողերի միկրոֆլորայի երկարամյա ուսումնասիրութիւնների շնորհիվ հնարավոր է դարձել մեկուսացնելու նկարագրելու մինչ այդ գիտութեանն անհայտ նոր տեսակի ազոտոբակտերներ, ակտինոմիցետներ (Հ. Փանոսյան), ամոնիֆիկատորներ (Հ. Փանոսյան, Ա. Կիրակոսյան), միզանյութը քայքայող բակտերիաներ (Հ. Փանոսյան, Ռ. Միրզաբեկյան), ծծմբային բակտերիաներ (Հ. Փանոսյան) և այլն: Այս աշխատանքները մեծապես նպաստեցին Հայաստանի աղակալած հողերն աղաղերծելու և գյուղատնտեսական տեսակետից յուրացնելու գործի կազմակերպմանը:

Ինչպես հայտնի է, թիթեռնածաղկավոր բույսերի մշակումը հսկայական նշանակութիւն ունի հողի բերրութեան բարձրացման գործում, եթե նրանց արմատների պալարիկներում զարգանում են վիրուլենտ ու ակտիվ, տվյալ բույսին յուրահատուկ պալարաբակտերիաներ: Հայաստանում այդ ուղղութեամբ կատարված լաբորատոր, վեգետացիոն և դաշտային փորձերը շատ հետաքրքիր ու կարևոր նորութիւններ բացահայտեցին: Պարզվեց, որ Հայաստանում շատ հնուց մշակվող առվույտի, կորնզանի և վիկի բերքատուլութիւնն զգալիորեն բարձրանում է, եթե նրանց մշակման ժամանակ հողը վարակվում է Հայաստանի հողային պայմաններից մեկուսացված և այդ բույսերին յուրահատուկ վիրուլենտ ու ակտիվ պալարաբակտերիաներով, ինչպես նաև, եթե միաժամանակ հողը պարտացվում է ֆոսֆորական պարարտանյութերով (Հ. Փանոսյան, Ա. Պետրոսյան): Այս աշխատանքները հիմք ծառայեցին Հայաստանում առաջին անգամ բակտերիալ պարարտանյութ (նիտրագին) արտադրելու համար:

Պալարաբակտերիաների ու թիթեռնածաղկավոր բույսերի փոխհարաբերութիւնների ժամանակ պալարաբակտերիաների ակտիվութեան և վիրուլենտութեան վրա մեծապես ազդում է բույսի աճման ժամանակ նրա տրամադրութեան տակ եղած շարժուն ազոտային միացութիւնների պաշարը: Բացի դրանից, յուրաքանչյուր պալարաբակտերիայի առանձնահատկութեան դրսևորման գործում կարևոր դեր է խաղում տվյալ թիթեռնածաղկավոր բույսի բուսահյութի առանձնահատկութիւնը: Այդ բուսահյութը, իր պալարաբակտերիայի զարգացմանը նպաստելով, մի այլ թիթեռնա-

ժաղկավոր բույսի պալարաբազկտերիայի կենսագործունեությունն արգելակում է (Մ. Չայլախյան, Ա. Մեհրաբյան):

Արմատներում պալարիկներ առաջացնող ոչ թիթեռնածաղկավոր բույսերից Հայաստանում առաջին անգամ հանգամանորեն հետազոտվել է փշատենին, նրա արմատների պալարիկների կենսաբանությունը (Հ. Փանոսյան):

Պալարաբազկտերիաների կենսաբանությունը վերաբերող այս աշխատությունները մեծ նշանակություն ունեցան ոչ միայն Հայաստանի գյուղատնտեսության համար, այլև պալարաբազկտերիաների մասին եղած համաշխարհային գրականությունը հարստացրին նոր տվյալներով:

Հայաստանի մանրէաբանները, հողի մանրէաբանական պրոցեսների առանձնահատկությունների պարզաբանմանը զուգընթաց, մշակել են նաև մի քանի օրիգինալ մեթոդներ, որոնք միանգամայն ձիշտ են դրսևորում հողում տեղի ունեցող այս կամ այն մանրէաբանական պրոցեսը (Հ. Փանոսյան):

Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հետազոտությունները, որոնք վերաբերում են պալարաբազկտերիաների և սպորավոր բակտերիաների էկոլոգո-աշխարհագրական տարածվածությունը: Այդ հետազոտությունների շնորհիվ, օրինակ, պարզվում է, որ շատ բնորոշ բնախոսական խմբի սպորավոր բակտերիաներ պարունակում են ոչ միայն Հայաստանի տարբեր բարձրություններում գտնվող հողատիպերը այլև տվյալ հողատիպերում աճող յուրաքանչյուր բուսածածկոցի առանձին տեսակի բույսեր (է. Ա. Ֆրիկյան): Նման օրինաչափություններ նկատվում են նաև պալարաբազկտերիաների մոտ: Վերջին դեպքում կարևորն այն է, որ եթե որոշակի էկոլոգիական պայմանների հարմարված պալարաբազկտերիան դրվում է նոր էկոլոգիական պայմանների մեջ, ապա նա իրեն վատ է զգում, թուլանում են նրա ակտիվությունն ու վիրուլենտությունը (Ա. Պետրոսյան, Հ. Փանոսյան): Այս ամենը մի անգամ ևս հաստատում է հողերի ուղղաձիգ զոնայականությունը և բնորոշ առանձնահատկությունները:

Սեանա լճի մակարդակն իջնելու հետևանքով հսկայական չափերի հասնող տարածություններ ազատվեցին ջրից: Այդ տարածություններում հող ստեղծելը կամ դրանք գյուղատնտեսական մշակույթի համար պիտանի դարձնելը գիտնականների համար օրակարգի հարց դարձավ: Հենց այս նպատակով էլ վերջին տարիների ընթացքում Հայաստանի մանրէաբանները (Ա. Պետրոսյան,

Ա. Մինասյան, Ռ. Հարությունյան) հողա գրունտների յուրացման հետ կապված ծավալուն հետազոտություններ կատարեցին: Նրանք պարզեցին, օրինակ, տարբեր ֆիզիկա-քիմիական կազմի հողագրունտներում բնակվող միկրոօրգանիզմների տեսակային կազմը, նրանց քանակի ու որակի փոփոխությունները ըստ գրունտների մերկացման տարիների, ինչպես նաև գրունտներում հողառաջացման պրոցեսների ինտենսիվությունը:

Վերջին տարիների ընթացքում, այդ հետազոտություններին զուգընթաց, ուսումնասիրվել են նաև լճի ջրի միկրոֆլորայի կազմը, տարբեր բնախոսական խմբերի միկրոօրգանիզմների ձևա-բնախոսական առանձնահատկությունները և նրանց կենսական պրոցեսների նշանակությունը ջրի կենդանական ու բուսական օրգանիզմների սնման համար (Պ. Քալանթարյան, Ա. Պետրոսյան, Մ. Ղամբարյան, Հ. Փանոսյան, Գ. Բաբայան և ուրիշներ):

Սովետական մանրէաբանության կարևոր հաջողություններից մեկն էլ հողի բերրիության բարձրացման համար բակտերիալ պարարտանյութերի մասսայական կիրառումն է:

Ներկայումս արդեն կասկածից վեր է, որ եթե հողը պարարտացվում է նիտրագին, ազոտոբակտերին, ֆոսֆորաբակտերին կոչվող բակտերիալ պարարտանյութերով, ապա գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունն զգալիորեն (20—50%-ով) բարձրանում է (Հ. Փանոսյան, Ա. Կիրակոսյան, Ս. Ղարազուլյան և ուրիշներ):

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հետազոտությունները, որոնց շնորհիվ ճիշտ գրասերվել է ազոտոբակտերների և հողային այլ բակտերիաների համատեղ գործունեությունը: Այսպես, օրինակ, պարզվում է, որ եթե ազոտոբակտերները բույսերի արմատների շրջակայքում զարգանում են արմատային բակտերիաների հետ մեկտեղ, ապա տվյալ բույսի բերքատվությունն զգալիորեն բարձրանում է (Ա. Կիրակոսյան, Ա. Պետրոսյան, Է. Ազարյան): Հ. Փանոսյանի, Ա. Կիրակոսյանի և ուրիշների հետազոտությունների շնորհիվ բացահայտվել է, թե ինչու ազոտոբակտերներից պատրաստված ազոտոբակտերիանի բակտերիալ պարարտանյութեր մի շարք հողատիպերում դրական արդյունք չի տալիս:

Հ. Փանոսյանի, Ա. Մինասյանի, Շ. Թառայանի, Ռ. Հարությունյանի հետազոտություններից պարզվում է, որ ցանքաշրջանառության մեջ մտնող որոշ բույսեր (թիթեռնածաղկավոր բույսեր),

եթե իրենց աճեցողութեան ընթացքում հողում ազոտային նյութեր շատ են կուտակում, ապա ազոտի ասիմիլյացիային շեն նպաստում, իսկ ընդհակառակը, հացազգիները, կարտոֆիլը, ծխախոտը և այլ ոչ թիթեռնածաղկավոր բույսեր, որոնք հողում ազոտային նյութեր շատ քիչ են կուտակում, ազոտաբաղաձեռների վրա բարեբար ազդեցություն գործելով, մեծապես նպաստում են ազոտի ասիմիլյացիային:

Հայաստանի մանրէաբաններին հաջողվել է Հայաստանի տարբեր հողակլիմայական պայմաններից մեկուսացնել տեղական այնպիսի վիրուլենտ և ախտիվ պալարաբաղաձեռիաներ, որոնցով եթե հողերը հարստացվեն, ապա թիթեռնածաղկավոր բույսերի բերքատվությունը 30—50, իսկ երբեմն էլ 100% -ով կբարձրանա:

Այսպիսի բարձր վիրուլենտություն և մեծ ախտիվություն ունեցող պալարաբաղաձեռիաներից շատերը ներկայումս լայնորեն օգտագործվում են նիտրագինի արտադրության մեջ: Բավական է ասել, որ միայն 1960 թվականին հիշյալ բաղաձեռներով Երևանի բաղաձեռի պարարտանյութերի գործարանը պատրաստել է մոտ 150000 հեկտար-բաժին նիտրագին, որն օգտագործվել է ոչ միայն Հայաստանում, այլև միութենական այլ ուսպուբլիկաներում:

Պալարաբաղաձեռիաների և հողային մի շարք միկրոօրգանիզմների փոխհարաբերությունների բնույթը պարզաբանելու աշխատանքների ընթացքում բացահայտվեցին այնպիսի երևույթներ, որոնք տեսական ու գործնական մեծ կարևորություն են ներկայացնում: Օրինակ, հողային որոշ բաղաձեռիաներ (ախտիվատորներ) պալարաբաղաձեռիաների հետ զարգանալիս՝ վերջիններիս վիրուլենտության ու ախտիվության վրա բարեբար ազդեցություն են գործում, իսկ հողային մի շարք բաղաձեռիաներ էլ (անտագոնիստներ) պալարաբաղաձեռիաների վրա ճնշիչ ներգործություն են թողնում: Այդ երկու տարբեր տեսակի միկրոօրգանիզմների՝ պալարաբաղաձեռիաների հետ համատեղ կենսագործունեությունն անդրադառնում է նաև թիթեռնածաղկավոր բույսերի աճեցողության վրա (Ա. Մեհրաբյան, Է. Ազարյան, Հ. Փանոսյան, Ռ. Հարությունյան և ուրիշներ):

Է. Ա. Ֆրիկյանը, բազմակողմանիորեն ուսումնասիրելով Սովետական Միության տարբեր էկոլոգո-աշխարհագրական մասերի և, առանձնապես, Հայաստանի տարբեր կլիմայական պայմանների հողերում ապրող բազմաթիվ սպորավոր բաղաձեռիաների ձևաբանական և, հատկապես, անտագոնիստական հատկանիշները:

ցույց է տալիս, որ նրանք օժտված են շատ ինքնատիպ անտազո-  
նիստական հատկութիւններով և, որ կարևորն է, որ հատկութիւն-  
ները կարելի է լայնորեն օգտագործել բախտերիաների կարգաբան-  
ման համար: Այդ հատկանիշն ապացուցվել է նաև տարբեր տե-  
սակի ազոտոբակտերիաների միմյանց վրա խաչաձև ազդեցութիւնն  
ուսումնասիրելիս (է. Աֆրիկյան, Ռ. Հարութիւնյան): Սակայն  
այստեղ որոշ շեղումներ նկատվում են: Ա. Կիրակոսյանի աշխա-  
տանքների ընթացքում պարզվել է, որ ազոտոբակտերիաների ա-  
ռանձին տեսակների միջև նույնպես գոյութիւն ունի անտազոնիս-  
տական փոխհարաբերութիւն:

Ճառագայթասնկերի տարբեր տեսակների անտազոնիստական  
հատկութիւնների պարզաբանման ուղղութեամբ արժեքավոր աշ-  
խատանքներ է կատարել Վ. Թումանյանը: Նա ուսումնասիրելով  
հողային մի շարք ճառագայթասնկերի և բույսերի բակտերիալ հի-  
վանդութիւններ առաջացնող մի քանի տեսակի բակտերիաների  
փոխհարաբերութիւնը, ցույց է տալիս, որ հողային ճառագայթա-  
սնկերից շատերը տոմատի քաղցկեղ հիվանդութեան հարուցիչի և  
ծխախոտի չեղտութեան արգասիք հանդիսացող բակտերիաների  
նկատմամբ լավ արտահայտված անտազոնիստական հատկութեամբ  
են օժտված:

է. Աֆրիկյանի, Վ. Թումանյանի, Ռ. Բոբիկյանի ուսումնասի-  
րութիւններից պարզվում է, որ անտազոնիստ սպորավոր բակտե-  
րիաներից շատերն իրենց կենսագործունեութեան ընթացքում ավել  
կուտուրալ հեղուկում կուտակում են այնպիսի նյութեր, որոնք  
բույսերի մի շարք բակտերիալ հիվանդութիւնների հարուցիչների  
վրա ճնշիչ ներգործութիւն թողնելուց բացի, մեծապես նպաստում  
են բույսի աճեցողութեանը և նրա բերքատվութեան բարձրացմանը:

Ինչպես հայտնի է, գյուղատնտեսական կուլտուրաների բերքի  
զգալի կորուստ է լինում, երբ նրանք վարակվում են բակտերիալ  
հիվանդութիւններով: Ահա թե ինչու Հայաստանի մանրէաբաննե-  
րը նման երևույթների վրա չէին կարող ուշադրութիւն շարձնել:  
Դեռ 1924—1925 թվականներին, երբ Հայաստանում բամբակենու  
մշակմանը տարեցտարի մեծ տարածութիւններ էին հատկացվում  
և միաժամանակ զարգանում էր բամբակի վերամշակման արդյու-  
նաբերութիւնը, այն ժամանակվա սակավաթիվ մասնագետները  
ուշի-ուշով հետևում էին բամբակենու մշակումը լավագոյն ձևով  
կազմակերպելու գործին:

Այդ ժամանակներում բամբակենուն զգալի վնասներ էր հասցը-

նում, այսպես կոչված, երիտասարդ բույսերի արմատավզիկի փտախտ հիվանդությունը, որի պատճառները հայտնի չէին: Այդ հիվանդության ուսումնասիրությունը մեր անդամ զբաղվեց պրոֆ. Պ. Քալանթարյանը: Կարճ ժամանակամիջոցում նա պարզեց, որ այդ հիվանդությունն առաջանում է հատուկ բակտերիաների կենսագործունեության հետևանքով: Ինչպես հայտնի է, բամբակենին խիստ տուժում է նաև գոմող կոչված հիվանդությունից, որի բնույթը նույնպես միայն մեզ մոտ է առաջին անգամ պարզվում (Ա. Բաբայան, Չ. Բեժանյան, Ա. Կիրակոսյան): Առանձնապես լայն գիտա-հետազոտական աշխատանքներ են կազմակերպվել պտղատու ծառերի բակտերիալ հիվանդությունների ուսումնասիրության ուղղությամբ (Չ. Սուջյան, Ռ. Միրզաբեկյան; Ս. Ավագյան և ուրիշներ):

Ներկայումս առանձնապես կարևոր նշանակություն են ստացել ծիրանենու թառամում հիվանդության հարուցիչի վերաբերյալ կատարված աշխատանքները: Այդ աշխատանքների շնորհիվ էլ Հայաստանում ցույց տրվեց, որ բույսերի բակտերիալ հիվանդությունների դեմ կարելի է պայքարել հիվանդածին միկրոբի հանդեպ անտագոնիստ միկրոբներով (Ռ. Միրզաբեկյան, Ն. Կարապետյան):

Հայաստանում առանձնապես կարևոր և արժեքավոր հետազոտություններ են կատարվել տոմատի բակտերիալ հիվանդությունների ուսումնասիրության բնագավառում: Հանգամանորեն ուսումնասիրվել է տոմատի, այսպես կոչված, քաղցկեղ հիվանդությունը, որը հակայական վնասներ է պատճառում տնտեսությանը: Այդ աշխատանքների ընթացքում պարզվել է, որ տոմատի քաղցկեղն առաջանում է յուրահատուկ բակտերիայի կենսագործունեության ընթացքում (Ռ. Ղալաչյան), և որ այդ բակտերիալ վարակը կարող է տարածվել տարբեր ուղիներով:

Տոմատի քաղցկեղից բացի, հանգամանորեն ուսումնասիրվել են նաև տոմատի, այսպես կոչված, թաց փտում և բանջարանոցային մի քանի կուլտուրաների սև ոտիկ բակտերիալ հիվանդությունները:

Բանջարանոցային կուլտուրաների հիշյալ բակտերիալ հիվանդությունների դեմ, ինչպես ցույց են տալիս Ռ. Ղալաչյանի հետազոտությունները, կարելի է հեշտությամբ պայքարել մի քանի փմիակա պրեպարատներով և անտիբիոտիկներով:

Վերջին ժամանակներս Ռ. Ղալաչյանը հետաքրքիր և կարևոր աշխատանքներ է կատարել ֆիտոպաթոգեն բակտերիաների վրա,

այսպէս կոչվող, ֆիտոնցիդների ազդեցութեան պարզաբանման ուղղութեամբ: Այդ աշխատանքներից պարզվում է, որ քիչ չեն այնպիսի բույսեր, որոնց հյուսիս նույնիսկ փոքր քանակն արագ ու շքնաչափում է հիվանդածին միկրոբներին: Այս տեսակետից էլ ֆիտոնցիդների հայտնաբերումն արտակարգ կարևորություն է ներկայացնում:

Ս. Ավագյանի ուսումնասիրություններից պարզվում է, որ հողում շատ տարածված կարտոֆիլային ձողիկների հիվանդածին տեսակները ոչ միայն կարող են ծիրանենու պտուղների, այլև դրմիկների գորշացում առաջացնել: Վերջին տիպի գորշացումը մեծ մասամբ երևան է գալիս, երբ հողը կարտոֆիլային ձողիկներով շատ է հարուստ: Իսկ եթե այլ կոլտուրաների (օրինակ՝ կաղամբի) մշակմամբ հողն այդ բակտերիաներից ազատանա և ապա դրմիկ մշակվի, վերջինիս վրա գորշացում հիվանդություն երևան չի գա:

\* Արդյունաբերական մանրէաբանության բնագավառի աշխատանքները հիմնականում կաթնաթթվային բակտերիաների և շաքարասնկերի ուսումնասիրություններին են վերաբերում:

Առաջին հերթին հետազոտվել է կովկասյան-շվեյցարական պանրի միկրոֆլորան (Մ. Վոլկովա), ուսումնասիրվել են այդ միկրոֆլորայի կազմի մեջ մտնող առանձին տեսակների ձևաբանական և, որ կարևորն է, բարձրորակ պանիր է ստացվում (Փ. Սարուխանյան): Մեկուսացվել են սպեցիֆիկ կաթնաթթվային բակտերիաներ, որոնք, պանրի հասունացման համար որպէս մակարդ օգտագործվելիս՝ պանրի հասունացման պրոցեսը շատ կանոնավոր է ընթանում և, որ կարևորն է, բարձրորակ պանիր է ստացվում (Փ. Սարուխանյան, Կ. Երզինկյան): Կարևոր աշխատանքներ են կատարվել նաև թուշի պանրի և Եղեգնաձորի պանրի միկրոֆլորայի ուսումնասիրության բնագավառում:

Հայաստանում պատրաստվող կաթնամթերքների միկրոֆլորայի հետևողական ուսումնասիրության շնորհիվ է, որ հնարավոր է դարձել պատրաստելու տարբեր տեսակի պանիրներ:

Վերջին տարիներում կարևոր հետազոտական աշխատանքներ են կատարվել հատկապէս տեղական կաթնաթթվային մի շարք բակտերիաների ձևա-բնախոսական առանձնահատկությունների պարզաբանման ուղղութեամբ: Մասնավորապէս՝ նորածին երեխաների, զառների, հորթերի կղանքներից և թթու կաթնամթերքներից մեկուսացվել են ացիդոֆիլ կաթնաթթվային բակտերիաներ (Կ. Երզինկյան): Այդ բակտերիաները լաբորատորիաներում, սնման

տարբեր բնույթի պայմաններում աճեցնելու և դաստիարակելու շնորհիվ, Լ. Երզնկյանին, Մ. Փահլևանյանին, Ե. Մուրադյանին հաջողվել է ստանալ «Եր-1» և «Եր-2» անվամբ այնպիսի ացիդոֆիլ կաթնաթթվային բակտերիաներ, որոնք թթվա և ֆենոլադիմացկուն լինելով, ունեն մի շարք աղե-ստամոքսային հիվանդություններ բուժելու հատկություն:

Չողածև և գնդաձ կաթնաթթվային բակտերիաների փոփոխականություն հարցերի ուսումնասիրության ժամանակ (Լ. Երզնկյան) պարզվել է, որ այդ բակտերիաները տարբեր տեսակի սուլֆոամիդային պրեպարատների, ֆենոլի տարբեր կոնցենտրացիաների, անտիբիոտիկ նյութերի ազդեցության տակ ենթարկվում են այնպիսի ձևա-բնախոսական փոփոխությունների, որ նրանցից մի քանիսը դառնում են ֆենոլադիմացկուն-ֆտալազոլադիմացկուն և սիմպտոմիցինադիմացկուն այլատեսակներ:

Արժեքավոր աշխատանքներ են կատարվել նաև բուսակիճան հումքերում զարգացող կաթնաթթվային բակտերիաների ուսումնասիրության ուղղությամբ (Է. Ազարյան): Այդ աշխատանքների ընթացքում տարբեր բույսերի էպիֆիտ միկրոֆլորայից մեկուսացվել են այնպիսի կաթնաթթվային բակտերիաներ, որոնք բուսական շաքարները խմորելիս առաջացնում են մեծ քանակությամբ կաթնաթթու և խմորվող հումքը դարձնում են շատ դիմացկուն: Այս բակտերիաները ներկայումս լայն ընդունելություն են գտել կերերի սիլոսացման գործում:

Հայաստանի բնապատմական պայմանների խայտաբղետությունը յուրահատուկ ազդեցություն է թողնում ոչ միայն բուսական ծածկույթի, այլև վերջինում բնակություն հաստատող միկրոօրգանիզմների վրա: Այդ տեսակետից էլ մեզ համար կարևոր նշանակություն են ստանում այն միկրոօրգանիզմները, որոնք որոշ բույսերի վերամշակման ժամանակ ակտիվ մասնակցություն են ցուցաբերում տեխնոլոգիական պրոցեսում: Այդ տեսակետից էլ առաջին հերթին ուսումնասիրվել է Հայաստանի գինիների միկրոֆլորան: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքներից պարզվել է, որ տեղական գինիներն ունեն հարուստ միկրոֆլորա, որի մեջ քիչ չեն նաև իսպանական շատ հաշտնի խերեսային շաքարասնկերին մոտ շաքարասնկեր: Մասամբ վերջիններիս ներկայությամբ են բացատրվում Հայաստանի գինիների ուրույն հատկությունները: Այդ հանգամանքը նկատի ունեալով Ն. Պրոստոսերգովը, դեռ 1928 թվականին, իրավացիորեն առաջարկում էր, մեզ մոտ, զարկ տալ

խերեսային գինուն մոտիկ գինիների արտադրութեանը: Հետագայում (1932 թ.), իր ուսումնասիրութեաններն ավելի խորացնելով, նա ցույց էր տալիս, որ Հայաստանի տարբեր շրջաններում մշակվող գինիների առանձնահատկութեանները հետևանք են ոչ միայն այդ շրջաններում մշակվող տարբեր տեսակի խաղողների, այլև վերջիններիս պտղի վրա բնակվող շատ սպեցիֆիկ միկրոֆլորայի: Եթե այդ միկրոֆլորայից մեկուսացվեն յուրահատուկ խերեսային շաքարասնկերը (Ն. Պրոստոսերգով, Ռ. Ա. Ֆրիկյան, Ա. Դիլանյան) և հատուկ եղանակով նրանց կենսական պրոցեսները կարգավորվեն, ապա հնարավոր է Հայաստանում հեշտութեամբ խերեսային գինիներ ստանալ:

Խաղողի պտուղների էպիֆիտ միկրոֆլորայի ուսումնասիրութեանները (Փ. Սարուխանյան, Հ. Հախինյան, Ա. Սևոյան) պարզեցին, որ նրանց կազմում քիչ չեն այնպիսի շաքարասնկեր, որոնք ընդունակ են մեծ տոկոս շաքար պարունակող քաղցուններում դարձանալ և միջավայրում զգալի քանակութեամբ սպիրտ կուտակել: Նրանց հաջողվել է խաղողը պտղի էպիֆիտ միկրոֆլորայից մեկուսացնել և ընտրութեան ու դաստիարակման միջոցով ստանալ այնպիսի սպիրտադիմացկուն շաքարասնկային կուլտուրաներ, որոնք բնական պայմաններում շատ շաքարի առկայութեամբ մինչև 19—20% ծավալային սպիրտ առաջացնելով, լուծույթին տալիս են յուրահատուկ հաճելի համ, հոտ ու արոմատ: Այս տիպի շաքարասնկերը Հայաստանում բարձր սպիրտայնութեան ունեցող քաղցր գինիների արտադրութեան համար մեծ նշանակութեան կարող են ունենալ:

Հայաստանի միկրոբիոլոգները, հետազոտելով գայլուկի, (դրոժ) վայրի ու կուլտուրական զանազան հատապտուղների, պտուղների և այլ բույսերի էպիֆիտ, ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջանների բնակչութեան կողմից օգտագործվող հացի թթմամորների միկրոֆլորան, կարողացել են մեկուսացնել բազմաբնույթ և մեծ հետաքրքրություն ներկայացնող նոր տեսակի շաքարասնկեր: Հետագայում արհեստական յուրահատուկ սննդամիջավայրերում այդ շաքարասնկերը զարգացնելու, դաստիարակելու միջոցով և ընտրութեան եղանակով ստացվել են սննդարդյունաբերութեան ու անասնակերի վերամշակման համար արտակարգ կարևորութեան ունեցող շաքարասնկեր:

Հատապտուղների և պտուղների էպիֆիտ միկրոֆլորայից մեկուսացվել են այնպիսի յուրահատուկ շաքարասնկեր (Փ. Սարու-

խանյան, Ա. Սևոյան), որոնք պտղագինիներ ստանալու և, առհասարակ, գինիներին պտղային համ ու հոտ տալու համար շատ կարևոր նշանակություն կարող են ունենալ:

Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հետազոտությունները, որոնք վերաբերում են թթվամորսների միկրոֆլորայի ուսումնասիրությունը: Այդ աշխատանքների ընթացքում նույնպես դաստիարակման և ընտրության միջոցով ստացվել են այնպիսի խմորիչ շաքարասնկեր ու կաթնաթթվային բակտերիաներ, որոնք խմորհունցի ժամանակ զարգանալիս տալիս են լավ արդյունքներ: Նրանց շնորհիվ հացն ավելի բարձրորակ է լինում: Այդ շաքարասնկերով և կաթնաթթվային բակտերիաներով պատրաստված մակարդակի փորձարկումը (արտագրության պայմաններում) փայլուն արդյունքներ տվեց, դրա շնորհիվ էլ ներկայումս այդ շաքարասնկերից «Հայաստան 17» և «Կիրովական 405» տեսակները հացի արդյունաբերության մեջ լայնորեն օգտագործվում են:

Անասնաբուժական և բժշկական միկրոբիոլոգիայի բնագավառում Հայաստանում նույնպես հսկայական հաջողություններ են ձեռք բերվել: Այդ գործում կարևոր աշխատանքներ են կատարել Ա. Իսահակյանը, Գ. Շաքարյանը, Վ. Բարսեղյանը, Վ. Հայրապետյանը, Ա. Միրզաբեկյանը և ուրիշներ:

4. **Ջրակենսաբանություն (միկրոբիոլոգիա):** Հայաստանը, ունենալով երկրաբանական յուրահատուկ կառուցվածք, լեռների բնորոշ գոգավորություն, գահավիժվող մեծ ու փոքր գետերի և գետակների ցանցավորություն, ինչպես նաև լեռնաստորոտների լայն ու նեղ խորխորատավոր տարածություններ, ունի ջրակալային տարածություններ, որոնք լեռնային բնաշխարհին տալիս են շատ զրավիչ տեսք ու գեղեցկություն: Ներկայումս ոչ բոլոր ջրակալներն են, որ ձկնաբուծության առումով իրենցից ներկայացնում են տնտեսական նշանակություն ունեցող օբյեկտներ: Հայաստանի ջրակալներից նրա էկոնոմիկայի համար կարևոր նշանակություն են ստացել Սևանա և Արփա լճերը: Հատկապես Սևանա լիճը մեծ դեր է խաղում մեր ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Սևանա լիճը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, ֆիզիկա-քիմիական ու կենսաբանական առանձնահատկությունների և ժողովրդական տնտեսության համար ունեցած կարևոր նշանակության, մարդկանց ուշադրությունը գրավել է դեռևս շատ վաղուց: Սակայն, շնայած դրան, նրա բնորոշ առանձնահատկություններն ավելի հիմնավորված կերպով ուսումնասիրվել են Հայաստանում Սովետական իշ-

խանութեան հաստատումից հետո միայն և ներկայումս նա ամենալավ ուսումնասիրված լճերից մեկն է համարվում:

Հայաստանի ջրամբարների, հատկապես Սևանա լճի բուսական ու կենդանական աշխարհների ուսումնասիրությունները հիմնականում սկսվեցին 1923 թվականից, երբ կազմակերպվեց Սևանի հիդրոբիոլոգիական կայանը: Սևանա լիճը, միակ խոշոր ջրակալը լինելով, Հայաստանի ձկնարդյունաբերության հիմնական բազան է հանդիսանում, և դրա համար էլ սկսվեց նրա մեջ զարգացող բուսական և կենդանական աշխարհներին պատկանող օրգանիզմների մանրամասն ուսումնասիրությունը: Բացի այդ, Սևանա լիճը, համարվելով բարձրագույն քաղցրահամ ջրակայաններից մեկը, իրենից ներկայացնում է չափազանց ինքնուրույն կենսաբանական կարևոր օբյեկտներից մեկը:

Առաջին հերթին լայն հետազոտություններ ձեռնարկվեցին պարզելու լճում զարգացող բուսականության և անողնաշարավոր կենդանիների կազմը, նրանց տարածվածությունը, բազմացման առանձնահատկությունները (Առնոլդ): Այդ առանձնահատկությունների շնորհիվ ճշտվեցին ձկների պաշարները, ըստ այդ տվյալների՝ ձկան կերի հիմնական մասը (բենտոսը) կենտրոնացած է լճի եզրագոտու շրջանում: Չնայած Սևանա լճի հատակային մասն ունի միջին արդյունավետություն, սակայն նա ունի կերի բարձր արժեք ներկայացնող բենտոս (Ֆրիդման): Այդ բենտոսի կազմում հաշվվում են անողնաշարավոր կենդանիների մոտ 130 տեսակ: Նրանցից յոթը նոր են Սևանա լճի համար: Զրի հատակի կենդանիները դասավորված են գոտիներով, այն էլ ըստ բնորոշ բիոտիպի բնակչությամբ և վերջինիս որակական ու քանակական որոշակի կազմով: Ձկն հատակի կենդանիների բիոմասսան հաշվվում է 10 հազար տոննա: Բենտոսի հիմնական կոմպոնենտներից են հանդիսանում դամբարուաները, և սրանք էլ ունեն զարգացման, բազմացման շատ յուրահատուկ կողմեր, ջրակալում նրանց մասսան 1519 տոննայի է հասնում, իսկ արդյունավետությունը՝ 3200 տոննայի (Ս. Մարկոսյան):

Սևանա լճի բենտոսի կազմում կարևոր տեղ են զբաղում տեղիպեղիզիները, որոնց կենսական առանձնահատկությունները (Ն. Շարոնով) ցույց են տալիս, որ նրանք էլ, ունենալով բազմացման շատ յուրահատուկ կողմեր, տարածված են լճի ամբողջ հատակով մեկ:

Բազմակողմանի ուսումնասիրվել են սղորուկների կենսաբանական առանձնահատկությունները (Ս. Մեշկովա), ճշտված են նրանց բազմացման շրջանները, անդառույթյան բնորոշ կողմերը: Տղորուկների բիոմասայի քանակը հասնում է մինչև 800 տոննայի:

Բացի այդ հետազոտություններից, բենտոսին զուգընթաց, մանրագին ուսումնասիրվել են Սևանա լճի բուսական ու կենդանական պլանկտոնի կազմը, նրա բնորոշ առանձնահատկությունները և այդ պլանկտոնների փոխադարձ կապն ու փոխազդեցությունների բնույթը:

Առաջին հերթին հետազոտվել են ջրիմուռները, հայտնաբերվել է 250 տեսակի ջրիմուռ, որոնց մեծ մասը կազմում են դիատոմային ջրիմուռները: Սրանք են, որ տալիս են զարնանային «ջրի ծաղկումը» (Վլադիմիրովա): Ֆիտոպլանկտոնի քանակը ամբողջ Սևանա լճում կազմում է 35,073 տոննա (Վ. Ստրոյկինա): Մեշկովայի տվյալներով լճի կենդանական պլանկտոնը կազմված է 29 տեսակից, որոնցից խսկական պլանկտոնայինը 10 է, կենդանական պլանկտոնի բիոմասան ամբողջ ջրակալում կազմում է 35,000 տոննա, իսկ նրա արդյունավետությունը՝ 164,000 տոննա: Սևանա լճի կենդանական պլանկտոնը մեծ դեր է խաղում ձկների և անողնաշարավոր կենդանիների անդառույթյան գործում:

Սևանա լճում զգալի տեղ են զբաղում մակրոֆիտները, որոնք հիմնականում հանդես են գալիս որպես մամուռներ և խարային ջրիմուռներ: Սրանք լճի հատակում կազմում են մակրոֆիտների որոշակի գոտիներ: Այդ բույսերի սահմանափակվածությունը բացատրվում է ջրի ալկեոթոմներով և արեգակի ճառագայթների թափանցելության աստիճանով: Սևանա լճի այդ խմբի բույսերի բիոմասան կազմում է 34,000 տոննա (Ա. Մարկոսյան):

Սևանա լճի կենդանական օրգանիզմների ուսումնասիրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել ձկների կենսաբանական առանձնահատկությունների և կարգաբանության վրա: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների շնորհիվ ճշտվել են լճի ձկան զարգացման դինամիկան և պաշարը: Հատկապես, մանրամասն բացահայտվել են Սևանի ձկներից ամենակարևորը հանդիսացող իշխանի զարգացման առանձնահատկությունները, սխտեմատիկան և նրա պաշարը: Ըստ որում իշխանը Սևանա լճում պոլիմորֆ է և հանդես է գալիս 4 այլատեսակով (ուսայով)՝ գեղարքունի, ամառային բախտակ, ձմեռային բախտակ և բոջակ: Զմեռային բախտակն էլ ունի երկու կենսատեսակ, որոնք իրա-

րից տարբերվում են իրենց կենսածին ունակութեամբ (Ֆորտունատով):

Իշխան ձկան կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները ցույց են տվել, որ նրա շորս այլատեսակներից (ռասա) աճման արագ տեմպ են ցույց տալիս ամառային ու ձմեռային բախտակները և գեղարքունին, իսկ աճման դանդաղ տեմպ է ցույց տալիս բոջակը: Իշխանը բաժանվում է գեներատիվ-լճայինի և գեներատիվ-գետայինի: Իշխանը սեռական հասունացման է հասնում կյանքի երրորդ տարում (2+): Բարձր պտղաբերություն ունի ձմեռային բախտակը (մոտ 6000 ձկնկիթ), իսկ ցածր՝ ամառային բախտակը և գեղարքունին, ավելի ցածր՝ բոջակը (514 ձկնկիթ): Պարզաբանվել են նաև գետերի ու գետակների և ապա լճի մեջ իշխանի ձկնկիթի բազմանալու կենսունակության բնորոշ կողմերը (Ֆորտունատով, Կուլիկով, Պավլով, Վլադիմիրով և ուրիշներ):

Շնորհիվ այդ բնույթի սիստեմատիկ աշխատանքների, հնարավոր է դարձել կարգավորելու լճի ձկան որսը:

Բացի իշխանից, ուսումնասիրվել է նաև կողակը, որը Սևանա լճի ձկան որսի մոտ 50%-ն է կազմում (Վլադիմիրով), ինչպես նաև բեղլուն, որը կերի տեսակետից իշխանի մրցակիցն է և հաճախ սնվում է նրա ձկնկիթով (Չիկովա):

1923—1927 թվականներին Սևանա լիճն է փոխադրվել Չուր և Լադոցա լճերի սիգը և, միաժամանակ, ուսումնասիրվել է նոր միջավայրում այդ ձկան ապրելու և կենսունակության առանձնահատկությունները, նրա տեսակական նշանակությունը, իշխանը և Սևանա լճի այլ հիմնական բնակիչ ձկների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները: Այդ բոլորը ցույց տվեցին, որ սիգը Սևանա լճի պայմաններում ձեռք է բերել մի շարք բնորոշ կենսաբանական հատկանիշներ: Սիգը Սևանի ձկնարդյունաբերության համար ներկայումս համարվում է կարևոր ձկներից մեկը (Ֆորտունատով, Պավլով, Մայիլյան):

Լճի ձկնաբուծության և ձկնատնտեսության համար կարևոր նշանակություն է ստանում նաև այն հարցերի պարզաբանումը, որոնք անմիջականորեն առնչվում են ջրածավալի տարբեր տեսակի ձկների աննդառության առանձնահատկությունների պարզաբանման հետ: Ձկնաբուծության և ձկնարդյունաբերության էֆեկտիվությունն անմիջականորեն կապված է յուրաքանչյուր տեսակի ձկան սննդանյութերի բնույթի և նրանց պաշարների, ինչպես նաև տարբեր տեսակի ձկների փոխհարաբերությունների ճշտման հետ: Այդ

առումով էլ միանգամայն հասկանալի է, թե ինչու մեր ձկնաբան-  
ները երկար տարիներ զբաղվել են ջրակալի տարբեր տեսակի  
ձկների համար սնունդ հանդիսացող բույսերի կամ կենդանիների  
կազմն ու քանակը որոշելու, ինչպես նաև ջրածավալի կենսական  
արդյունավետությունը բարձրացնելու միջոցառումներ մշակելու  
հարցերով: Այդ ուղղությամբ կարևոր հետազոտություններ են կա-  
տարել Վլադիմիրովը, Գյատովը, Գադիկյանը, Ռիլովը և ուրիշներ:

Սեանի լճի ջրերը Հայաստանի էներգետիկայի համար օգտա-  
գործելու հետևանքով նրա մակարդակի իջեցումը շէր կարող շան-  
դրադառանը ջրակալի կենսաբանական արդյունավետության վրա:  
Դրա համար էլ Սեանի բիոլոգիական կայանը, 1940 թվականից  
սկսած, զբաղվեց ստեղծված նոր պայմանների համեմատ ավելի  
խոր բնույթի հետազոտություններով: Ըստ որում պարզաբանվեցին  
լճի տարբեր խորություններում գտնվող կերային բազան, լճի  
թթվածնային ու ջերմային ռեժիմը, կենդանական ու բուսական  
պլանկտոնների փոփոխությունները և այլ հարցեր:

Այդ հետազոտությունների շնորհիվ ոչ միայն դրսևորվեց ա-  
ռանձին ձկների վերաբերմունքը ջրածավալի փոքրացման հանդեպ,  
այլև մշակվեցին ձկնարդյունաբերության էֆեկտիվության նոր մի-  
ջոցառումներ:

Այդ ուղղությամբ կարևոր աշխատանքներ է կատարել Շարո-  
նովը: Բացի ձկնաբազմարանների կազմակերպումից, խոշոր աշխա-  
տանքներ են կատարվել նաև դեռատի ձկների կերի համար հենց  
բազմարաններում կենդանի կերի բազմացումը կազմակերպելու  
ուղղությամբ (Մեշկովա): Ներկայումս արդեն համարյա դադարել  
է ձկների բնական ճանապարհով բազմացումը. այն տեղի է ունե-  
նում ձկնաբուծական գործարանների միջոցով:

Մշակվել է կողակի ձկնկիթի արհեստական բազմացման մե-  
թոդիկան՝ գետերի ու դետակների վրա (Ա. Մարկոսյան, Մայիլյան,  
Սլոբոդչիկով, Չիկովա):

Սեանա լճի մակարդակի իջեցմանը զուգընթաց, ինչպես ցույց  
են տալիս մի շարք ուսումնասիրություններ (Տ. Մեշկովա), խիստ  
փոփոխվում են ջրակալի բուսական ու կենդանական պլանկտոննե-  
րը, ինչպես նաև երևան են գալիս նոր տիպի բուսական ու կենդա-  
նական օրգանիզմներ: Փոփոխություններ են առաջ գալիս իշխանի  
տարատեսակների միջև, փոփոխվում է նրանց որսի բնույթը: Ահա  
այդ փոփոխությունները հաշվի առնելով և սխտեմատիկ տարեկան

ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով, ներկայումս մեր ձկնաբանները մշակել են մի շարք միջոցառումներ Սևանա լճի ձկան պաշարները պահպանելու համար:

Ջրի մակարդակի իջեցումը խիստ անդրադարձել է ոչ միայն մակրոֆիտների հիմնական ներկայացուցիչների՝ մամուռների և խարային ջրմուռների տարածվածության, այլև կենդանական աշխարհի առանձին օրգանիզմների տեղաբաշխման պրոցեսների վրա, որոնք էական նշանակություն ունեն իշխանի կերային բաղանների համար (Մարկոսյան): Ջրակենսաբանական և ձկնաբանական ուսումնասիրություններ են կատարվել նաև Հայաստանի այլ ջրակալներում: Այդ տեսակետից Արփա լիճը Հայաստանի ձկնարդյունաբերության երկրորդ խոշոր վայրն է: Ներկայումս լճի մակարդակը բավականին բարձրացել է, և լիճը վեր է ածվել մի մեծ ջրավազանի: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արփա լճի մակարդակի բարձրումն ու նրա տարեկան տատանումները խիստ բացասաբար են անդրադառնում նրա կենսոնակության վրա: Դրա շնորհիվ էլ ջրի բարձրակարգ բույսերը ոչնչանում են, և բենտոսի բիոմասսայի քանակն էլ աստիճանաբար հասնում է մինիմումի: Պակասել է կենդանական պլանկտոնի բիոմասսան: Ջրային բուսականության կրճատման հետևանքով էլ խիստ դանդաղ է ընթանում Արփա լճի կարևոր ձկներից մեկի՝ սազանի բնական աճը: Այդ բոլորը, իհարկե, խիստ բացասաբար է ազդում լճի ձկնարդյունաբերության վրա (Դերժավիճ, Մարկոսյան, Մեշկովա, Չիկովա, Շարոնով):

Մնացած ջրակալներից ուսումնասիրվել են Մեծամոր լիճը (Այլրիճ), Ակնալիճը, Արագածի Սև լիճը, Ինչպես նաև գետերից՝ հատկապես, Հրազդանը, մասամբ՝ Որոտանը, Այրիչան և այլն:

\* Սույն զեկուցման համար օգտագործել ենք հետևյալ աշխատությունները.

1 Հ. Կ. Փանոսյան—Միկրոբիոլոգիայի հաջողություններն ու նրա զարգացման հեռանկարները Սովետական Հայաստանում:

Հայկ. ՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր», հատ. 10, № 11, 1957 թ.

2 Я. И. Мулкиджанян. Ботаника в Армении (рукопись), 1961 г.

3 А. А. Чилингарян, С. М. Хизорян. Зоологический институт Академии наук Армянской ССР к 40-летию установления Советской власти в Армении. Зоосборник № 4. АН АрмССР, г. Ереван.

4 А. Г. Маркосян, Достижения гидробиологических и ихтиологических исследований в Армении за 40 лет. «Известия» АН АрмССР (биолог. и сельхоз. науки), том XI, № 1, 1958 г.

А. К. ПАНОСЯН, Я. И. МУЛКИДЖАНЫАН, А. А. ЧИЛИНГАРЯН,  
А. Г. МАРКОСЯН

## ДОСТИЖЕНИЯ БИОЛОГИИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

### Р е з ю м е

С первых дней установления Советской власти в Армении стали создаваться отдельные научные очаги, в которых велись исследования и подготовка научных кадров в области биологии. Большая заслуга в этом деле принадлежит профессору Оганесяну А. (биохимия), Беделяну О. (ботаника и физиология растений), Калантаряну П. (микробиология), Исаакяну А. (медицинская микробиология), Тер-Погосяну А. (зоология), Шелковникову А. (зоология и ботаника), Кузнецову Н., Троицкому Н., Гросгейму А., Сосновскому Д. (ботаника) и другим ученым, по инициативе и под руководством которых организовывались и развивали свою деятельность эти учреждения.

Первоначально биологические исследования проводились на кафедрах высших учебных заведений, а с 1935 года — в соответствующих научных учреждениях Армянского филиала Академии наук СССР, преобразованного в 1943 году в Академию наук Армянской ССР.

Развитие биологических наук в Армении тесно связано с достижениями соответствующих научных центров в братских советских республиках. Армянские биологи постоянно чувствуют поддержку со стороны ученых всех советских республик и особенно Российской Федерации.

**Ботаника** — В первые же годы установления Советской власти в Армении началось планомерное развитие ботаники. В 1925 г. при Министерстве сельского хозяйства был создан Естественно-исторический музей с гербарием, послуживший в дальнейшем (1936) основой для создания Института биологии, в котором гербарий составил самостоятельный сектор.

От сборов и описания отдельных растений ученые-ботаники перешли к подведению первых итогов. В настоящее время составлено 6 томов «Флоры Армянской ССР». Составлены

монографии по изучению отдельных семейств и родов растений. Изучены лесная, пустынная, степная растительность ряда районов республики. Составлены карты растительности Закавказья и Армянской ССР, кормовых угодий и лесов Армянской ССР. Успешно изучаются растительные ресурсы республики для рационального их использования в народном хозяйстве (завершена паспортизация кормовых угодий, изучены алколоидоносные и лекарственные растения и др.).

Созданы новейшие направления ботанической науки — физиология растений, эволюционная морфология, филогения, палеоботаника, эволюционная анатомия растений, палинология, биология развития растений и др.

Значительная заслуга в развитии новых направлений ботанической науки, в познании флоры Армянской ССР и ее исторического развития, а также в создании кадров ботаников принадлежит члену-корреспонденту АН АрмССР А. Л. Тахтаджяну.

Այդ հիմնական եզրակացությանն է հանգում նաև հոգեբույժ Հ. Յազմաչյանը, որն ուսումնասիրելով Մատենադարանի ձեռագրական նյութերը և հնատիպ գրականությունը, գրել է «Հոգեբուժության հայացքները Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև XI դարը»<sup>3</sup> մենագրական արժեքավոր աշխատությունը։ Հենվելով

1 1958 թ. Հայկական ՍՍՌ ԳԱ Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորը վերակառուցվեց և ԳԱ-ին առընթեր կազմակերպվեց Բնագիտության և տեխնիկայի խորհուրդ։

2 Խ. Ա. Մելիք-Փարսադանյան, Հայ հին բժշկական և բիոլոգիական լեքսիկայի ծագման մասին, տես՝ ՀՍՍՌ ԳԱ Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի գիտական աշխատությունների ժողովածու. № 2, Երևան, 1949։

3 Հ. Յազմաչյան, Հոգեբուժության հայացքները Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև 11-րդ դ., Երևան (մեքենագիր), թեկնածուական դիսերտացիա, 1954։

ալաղ միջնադարյան հայ հեղինակների (Մովսես Խորենացի, Եղիշե, Եղնիկ Կողպացի, Հովհան Մայրիվանեցի և ուրիշ.) աշխատությունների վրա ցույց է տալիս, որ հոգեկան հիվանդությունները, ինչպես նաև հոգեբանության խնդիրները Հայաստանում քննության են առնվել անտիկ աշխարհի, հելլենիստական երկրներում զարգացող քիտությունների մակարդակի համեմատ: Հեղինակը ընդգծում է այն ուշագրավ փաստը, որ հին Հայաստանում հոգեկան հիվանդների նկատմամբ ցուցաբերվել է խնամք և հոգատարություն:

Նախառևույրցիտն հայ բժշկապատմագրությունը մոռացության է տվել այն հանրահայտ փաստը, որ արաբներն իրենց հաղթական էքսպանսիվ պատերազմներից հետո, ինչպես Ս. Ս. Կովներն է վկայում, VIII դարի վերջերին ունեին ընդամենը մեկ բժշկական և երեք ավքիմիայի ձեռագիր: Այնուհետև պատմական իրողություն է, որ իրենց արշավանքներից հետո երկար ժամանակ արաբները զբաղված էին թարգմանությունների միջոցով տիրապետելու անտիկ աշխարհի և հելլենիստական երկրներում ստեղծված բարձր մշակույթին, հասկանալի է, նաև բժշկագիտությանը: Առանց այդպիսի օգտակար գործունեության նրանք անկարող կլինեին X—XI դարերում, հատկապես բնական գիտությունների և բժշկագիտության բնագավառում, կատարելու համաձանաչում գտած առաջադիմական խոշոր թռիչքը:

Իսկ ինչ վերաբերում է նրանց այն փաստարկմանը, որ միջնադարյան հայ բժիշկների մեզ հասած գործերում օգտագործված են, այսպես կոչված, արաբական բժշկագիտական բառ-տերմիններ, այդ ճիշտ է: Սովետահայ բժշկապատմաբանները այդ երևույթը օրինաչափ են համարում, որովհետև միջին դարերում արաբական լեզուն, հատկապես Արևելքի երկրներում, հասկանալի պատճառներով միջազգային իրավունք էր ձեռք բերել և համարվում էր գրականության ու գիտության լեզու, ճիշտ այնպես, ինչպես լատիներենը՝ Արևմուտքում:

Հասկանալի է, որ միջնադարյան հայ բժիշկները չէին կարող զերծ մնալ այդ ազդեցությունից: Այդ հեղինակները մոռացության են տվել և չեն նկատել, որ մեր բժշկարաններում արաբական տերմինների հետ մեկտեղ, հիմնականում օգտագործված են միջին հայերենով կազմված բավականին հարուստ հայկական մասնագիտական բառ-տերմիններ: Դա ապացուցում է, որ բացի Գրիգոր Մագիստրոսից, հունարեն են իմացել և օգտվել են հունական գրա-

կանությունից բժշկապետ Մխիթար Հերացին (XII դ.), Գրիգոր Տաթևացին (XIV դ.), Ամիրդովլաթ Ամասիացին (XV դ.)<sup>1</sup>: Ինչպես հայտնի է, այս հարցին անդրադարձել և այն մանրամասն քննության է առել նաև հայտնի հայագետ Ատ. Մալխասյանցը<sup>2</sup>: Ի դեպ, հօգուտ այդ բանի է խոսում նաև Մատենադարանում պահվող ձեռագիր բժշկարաններից՝ վերջերս մեր կողմից հայտնաբերած, մինչև այժմ անհայտ հայ բժիշկ Գրիգորիսի (XIII դ.) մեծածավալ ու ջատ արժեքավոր աշխատությունը: Նրա բազմակողմանի ու խորը ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը այդ աշխատությունը կազմելու ընթացքում իր տրամադրություն տակ է ունեցել անտիկ և միջնադարյան բժշկագիտության պարծանք Հիպոկրատի (460—377 թթ.՝ մ. թ. ա.) էպիդեմիոլոգիայի և պրոգնոզի վերաբերյալ երկու գրքերը: Գրիգորիսի՝ «Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան» աշխատության մեջ հայերեն տառադարձութեամբ բերված են հունարեն բժշկագիտական տերմիններ՝ անփոփոխ վիճակում<sup>3</sup>: Այդ նշանակում է, որ միջնադարյան հայ բժիշկները իրենց կիրառական, մանկավարժական, գիտական և գրական գործունեության ընթացքում օգտվել են ոչ միայն արաբական, այլև անտիկ շրջանի հույն և այլազգի հեղինակների բժշկագիտությունը վերաբերող դասական բնագրերից:

Սովետահայ բժշկապատմաբանները հետազոտական զգալի աշխատանքներ են կատարել, որոնք վերաբերում են, զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի (X—XIII դդ.) Հայաստանում զարգացող բժշկագիտության պատմության պրոբլեմին:

Ամենից առաջ պետք է արձանագրել, որ սովետահայ բժշկապատմաբաններն իրենց կատարած ուսումնասիրություններում նշում են, որ պատմական հանրահայտ պայմանների բերմամբ X—XIII դարերի ընթացքում Հայաստանում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման մեջ տեղի են ունենում զգալի տեղաշարժեր, որոնք պայմանավորում են հայ

1 Լ. Ա. Հովհաննիսյան, բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացի, «Տեղեկագիր» ՄՍՄ ԳԱ հայկական ֆիլիալի, Երևան, 1941 թ., № 3, 4, էջ 117—126:

2 Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Մտ. Մալխասյանցի գրած առաջաբան, Երևան, 1940, էջ ԺԷ—ԺԸ:

3 Ա. Ս. Կծոյան, «Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան» (տես «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958 էջ 205—220):

ժողովրդի հոգևոր կյանքի բոլոր բնագավառներում նկատվող նոր որակը և ռեալիստական ուղղությունը:

Հայաստանում հիշյալ ժամանակաշրջանում զարգացող բժշկագիտության պատմությանն է նվիրված Ա. Ա. Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 2-րդ գիրքը: Այստեղ հեղինակը քննության է առնում XI—XIV դարերից մեզ հասած մի շարք ձեռագիր և տպագիր բժշկական աշխատություններ, հայ և Հայաստանում օտարազգի բժիշկների գործունեությունը, ուշագրավ տվյալներ է հաղորդում հիվանդանոցային հիմնարկների ու բժշկական դպրոցների մասին: Ավելի մանրամասն անդրադառնում է ընդհանուր բժշկագիտական և հատկապես մարդու մարսողական ուղիների ֆիզիոլոգիայի հարցերի շուրջը Գրիգոր Մազիստրոսի (XI դ.) ու հույն բժիշկ Կյուրակոսի միջև տեղի ունեցած հետաքրքրական բանավեճին: Այստեղ հեղինակը նշում է, որ բանավեճի ընթացքում Մազիստրոսն իրեն դրսևորում է որպես ժամանակաշրջանի գիտության նվաճումների քաջ ծանոթ ու գիտնական-տեսաբան: Գրքի 80 ընդարձակ էջերում հանգամանորեն վերլուծում է XII դարի հայ ականավոր բժշկապետ Մխիթար Հերացու կյանքը և գիտական գործունեությունը: Նա առանձնապես կանգ է առնում այդ ժամանակաշրջանի խոշորագույն բնագետ-բժշկի մեզ հասած «Զերմանց մխիթարութիւն» հայտնի աշխատության վրա, որը նվիրված է Հայաստանում լայն տարածում գտած սուր վարակիչ հիվանդություններին, որոնք, ինչպես վկայում է նրա հեղինակը, շարունակ հյուծել են հայ ժողովրդին: Ինչպես սուր վարակիչ հիվանդությունների, այնպես էլ ընդհանուր բժշկագիտական տեսական ու կիրառական հարցերը քննելիս՝ Մխիթար Հերացին լրիվ ինքնուրույնություն և խիստ քննադատական մոտեցում է ցուցաբերում իր ձեռքի տակ եղած գրականության հանդեպ: Ավելին՝ բժշկապատմաբաններ Վ. Թորգոմյանը, Ferran-ը, Seidel-ը, Լ. Հովհաննիսյանը, Խ. Մելիք-Փարսադանյանը, ուսումնասիրելով «Զերմանց մխիթարութիւն»-ը, հանգել են այն եզրակացության, որ նրա հեղինակը սուր վարակիչ հիվանդությունների պատճառագիտության (etiopatogenesis) հարցում, ժամանակաշրջանի գիտության զարգացման համեմատ առաջ է քաշում բոլորովին նոր և առաջադեմ տեսակետ: Ըստ Մխիթար Հերացու՝ տիֆային և մի շարք սուր վարակիչ այլ հիվանդություններ ծագում են այն ժամանակ, երբ

երակներին ներսում արյունը ենթարկվում է «բորբոսման»: Իսկ Մալարիային հիվանդությունները առաջանում են «լորձի բորբոսումից»<sup>1</sup>:

Վերոհիշյալ գիտնականները, հետազոտելով «Ջերմերի բորբոսային» տեսության էությունը, գտնում են, որ Մխիթար Հերացին գրանով հանձարեղորեն կռահել է ինֆեկցիոն պրոցեսի գաղափարը: Այս կապակցությամբ և, Հովհաննիսյանը գրում է. «...օբյեկտիվ և անհերքելի փաստ է, որ մինչև բակտերիոլոգիայի դարը ոչ մի բժիշկ չի օգտագործել ինֆեկցիոն պրոցես արտահայտող տերմին, որը իրականությանն այնքան մոտ լիներ, ինչպես այդ արել է Մխիթար Հերացին»<sup>2</sup>:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ նշել, որ XI—XIV դարերում մեզ մոտ զարգացող բժշկագիտության պատմությունը և, Ս. Հովհաննիսյանը բնութագրում է որպես հայկական ռենեսանսին հատուկ ուղղություն:

XI—XIV դարերի Հայաստանում զարգացող ինքնատիպ բժշկական կուլտուրայի գնահատության տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լ. Ս. Խաչիկյանի «Դիահերձումները հին Հայաստանում»<sup>3</sup> աշխատությունը, որտեղ հեղինակը, հենվելով Հովհաննես Երզնկացու-Պլուզի (XIII դ.) հաղորդած հավաստի տվյալների վրա, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Հայաստանում հիշյալ ժամանակաշրջանում բժշկագիտության զարգացման և ուսուցողական նպատակներով մահվան դատապարտվածներին ենթարկել են կենդանահատումների (vivisectio) մի բան, որ այդ նույն ժամանակաշրջանում չէին կատարում աշխարհի ոչ մի այլ երկրում: Այնուհետև նույն այդ աշխատության մեջ Լ. Ս. Խաչիկյանը պատմական-բանասիրական ուշագավ տվյալներով ապացուցում է, որ Հայաստանում գոյություն են ունեցել բարձրագույն բժշկական դպրոցներ (վարդապետարաններ) և «բժշկանոցներ», այսինքն՝ կլինիկաներ, որտեղ պրակտիկ ձևով է տարվել ուսուցումը<sup>3</sup>:

Հմուտ մանկաբարձ և գինեկոլոգ-բժիշկ Գ. Գ. Հարությունյանը մատենագրական սկզբնաղբյուրների հետազոտության հիման վրա բացահայտեց, որ միջնադարյան հայ բժիշկներն ունեցել են ստույգ գիտելիքներ կնոջ միզասեռական օրգանների անատոմիայի և ֆի-

1 Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարություն, Վենետիկ, 1832:

2 Լ. Ս. Հովհաննիսյան, «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 2-րդ գիրք, Երևան, 1946, էջ 120—121:

3 Լ. Ս. Խաչիկյան, Դիահերձումները հին Հայաստանում, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի հասարակ. գիտութ. բաժ. «Տեղեկագիր», 1947, 4:

գիղղոգիայի վերաբերյալ: Ուսումնասիրելով ձեռագրական նյութե-  
րը, Գ. Հարությունյանը բացահայտեց, որ այդ շրջանի հայ բժիշկ-  
ները բեղմնավորման վերաբերյալ կատարել են խոշոր առաջադի-  
մական քայլ: Հակառակ այդ ժամանակաշրջանում գրականության  
մեջ ընդունված—Արիստոտելի տեսակետի, ըստ որի բեղմնավորումը  
առաջանում է այն դեպքում, երբ տղամարդու «սերմը» (sperma-  
tosid-ը) ընկնում է դաշտանի արյունային միջավայր և այնտեղ  
սնվելով, նրանից գոյանում է սաղմը, հայ հեղինակները դտնում  
են, որ այն առաջանում է տղամարդու և)կնոջ «սերմերի» (սեռա-  
կան բջիջների) միավորումից<sup>1</sup>:

Սկզբնաղբյուրների և ձեռագրական տվյալների օգնությամբ  
Գ. Հարությունյանը բացահայտեց, որ մանկաբարձության և գինե-  
կոլղոգիայի բնագավառում հայ բժիշկները ձեռք են բերում զգա-  
լի նվաճումներ: Ամենից առաջ բազմաթիվ օրինակներով նա ապա-  
ցուցեց, որ XI—XIV դդ. հայ բժիշկները կատարել են կնոջ ներքին  
զննումը: Այդ հանգամանքը հնարավորություն է ընձեռել նրանց՝  
ձիշտ հասկանալ և նկարագրել կնոջ միզասեռական օրգանների  
պաթոլոգիական բազմապիսի շեղումները: Նրանք մանրամասն  
նկարագրել են կնոջ անբերության բազմաթիվ պատճառները, այս-  
պես, օրինակ, չզարգացած արգանդը, նրա թեքվածությունները,  
փողերի նեղ լինելու հանգամանքը, կնոջ միզասեռական օրգան-  
ների տարբեր բնույթի բարորակ ու չարորակ նորագոյացություն-  
ները, ինչպես նաև զանազան բնույթի սուր և խրոնիկական բոր-  
բոքային պրոցեսները:

Ավելի հետաքրքրական են Գ. Հարությունյանի հայտնաբերած  
նկարագրությունները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաս-  
տանում X—XIII դարերում կատարվել են մանկաբարձական այն-  
պիսի բարդ վիրահատումներ, ինչպես, օրինակ, պտղաշրջումը,  
պտղահատումը և կեսարյան հատումը: Դրա հետ միաժամանակ  
տրվել են բազմաթիվ գինեկոլղոգիական հիվանդությունների ման-  
րամասն նկարագրությունները: Հիշյալ նյութերի հիման վրա նա  
գրեց «Մանկաբարձությունը և գինեկոլղոգիան Հայաստանում  
հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը» իր դոկտո-  
րական դիսերտացիան, որը 1952 թ. պաշտպանեց Մոսկվայում:

1 Գ. Գ. Հարությունյան, Մանկաբարձությունը և գինեկոլղոգիան Հայաստա-  
նում հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը (դոկտ. դիսերտացիա,  
Մեքենագիր, 1952):

XI—XIV դարերի Հայաստանում զարգացող բժշկագիտության պատմությունը ուսումնասիրելու համար, մենք, մանրամասն ծանոթացել ենք Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտում (Մատենադարանում) պահվող ձեռագիր բժշկարանների հետ և հրատարակել ենք մի շարք հոդվածներ: Այդ աշխատությունների մի զգալի մասը լուսաբանում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են անատոմիային, ֆիզիոլոգիային, պաթոլոգիական անատոմիային, անամնեզին և հվանդ օբյեկտիվ քննության մեթոդներին, ինֆեկցիային ու հավաքարակայնության, մալարիային հիվանդություններին ու վարակաբուժության, վիրաբուժությանը, տիֆային հիվանդություններին, X—XIV դարերի հայ հեղինակների բնագիտական հայացքներին և այլ թեմաներին: Հիշյալ աշխատություններով մենք հանգում ենք այն եզրակացության, որ զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում հայ բժիշկները քաջ ծանոթ լինելով անտիկ աշխարհի, հելլենիստական, բյուզանդական և արաբական բժշկագիտության լավագույն տրադիցիաներին ու նվաճումներին, շարունակել են առաջ մղել մեր ինքնատիպ բժշկական կուլտուրան: Ծանաչողության և գիտության զարգացման համար հիմք են ծառայել նախնիների և իրենց անձնական փորձն ու դիտողությունը, դրանց ամփոփումն ու ընդհանրացումը: Մյուս կողմից՝ բժշկագիտությանը և բժշկական կրթությանը մեծ շարժում նպաստել են մահապարտյալների կենդանահատումները և դիահերձումների պրակտիկան:

Այսպես, օրինակ, XI—XIV դարերի հայ բժիշկները կենդանահատումների, ախտաբանական դիտողությունների ու դիահերձումների միջոցով զգալի նվաճումներ ձեռք բերեցին, հատկապես տեղագրական անատոմիայի և մարդու բնախոսության բնագավառում: Բնախոսության բնագավառում նրանք հասան այն հասկացողությանը, որ մարդու մարմնի ֆիզիոլոգիական ամբողջ գործունեությունը ղեկավարում, կանոնավորում է գլխուղեղը: Ավելին, նրանց քաջ հայտնի է եղել պերիֆերիկ ներվերի, ողնուղեղի և գլխուղեղի միջև գոյություն ունեցող ֆիզիոլոգիական կապը<sup>1</sup>:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ բժիշկները հիվանդների քննության ժամանակ օգտվել են նաև անամնեզի հատուկ

<sup>1</sup> А. С. Кцоян, Физиологические воззрения армян-врачей в эпоху расцвета феодальных отношений, „Известия“ АН АрмССР, биологическая серия, № 5, Ереван, 1957.

մշակված հարցացուցակից: Այսպես, օրինակ, «մեծ իմաստասեր» Մխիթար Հերացին (XII դ.) մշակել է անամենզի 10 հարցերը, որոնց մեջ կա նաև էպիդեմիոլոգիական բնույթի հարց: Իսկ բժըշկապետ Գրիգորիսը (XIII դ.) ունի հիվանդի սուբյեկտիվ գանգատների անամենզին վերաբերող, ըստ օրգան սիստեմների մշակած, 24 կետերից կազմված շափազանց ուշագրավ և իմաստալից հարցացուցակ<sup>1</sup>: Այդ բոլորը վկայում են կլինիկական մտքի զարգացման մասին:

Այդ շրջանի հայ բժիշկները մերժելով Կ. Գալենի (II դ.) մետաֆիզիկ լոկալ պաթոլոգիայի գաղափարը, ընդունել են միասնական, ընդհանուր օրգանիզմի առաջադեմ տեսակետը: Այս կապակցությամբ Մխիթար Հերացին գրում է, որ որևէ հիվանդության կամ ջերմի ժամանակ նվազում է մարմնի բոլոր օրգան-սիստեմների գործունեությունը, իսկ մահվան դեպքում է միայն, որ խափանվում է ամբողջապես<sup>2</sup>: Իսկ բժշկապետ Գրիգորիսը ընդհանուր, միասնական օրգանիզմի առաջադեմ տեսակետը արտահայտել է համեմատական և պատկերավոր ձևով: Նա գրում է, որ մարմնի բոլոր օրգանները իրենց ֆիզիոլոգիական գործունեությամբ իրար նկատմամբ այնպես են, ինչպես հաշտ, բարյացակամ դրկիցները իրար հետ, երբ մեկն ու մեկին մի ղժբախտություն է պատահում, այդ առթիվ վշտանում, տրտմում են մյուս բոլորը:

Այնուհետև այդ շրջանի հայ բժիշկները հիվանդին մոտեցել են, ելնելով նրա մարմնի կոնստիտուցիոնալ առանձնահատկությունից: Հիվանդության առաջացումը նրանք կապել են արտաքին միջավայրի հետ, թե ինչպես են արտաքին միջավայրի բազմապիսի գործոնները ազդում մարդու մարմնի վրա և առաջ բերում հիվանդություններ: Սակայն այս կապակցությամբ հետաքրքրականն այն է, որ նրանց հայտնի է եղել վարակի և հավաքականության գաղափարը: Ավելին, բժիշկ Գրիգորիսը նշում է վարակի տարածման երեք ուղիները՝ ա) առողջ մարդու հիվանդի հետ անմիջական շփումը, բ) հիվանդի իրերի միջոցով և գ) օդի միջոցով: Նրանց հայտնի է եղել նաև վարակի տարածումը ջրի, սննդամթերքների ու ձանձի միջոցով և այլն:

1 Ա. Ս. Կոռյան, XII—XIV դարերի հայ բժիշկների հիվանդների հետազոտման մեթոդները (տես «Առողջապահություն», № 3, Երևան, 1956 էջ 51):

2 Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարություն, Վենետիկ, 1932:

Վիրաբուժության բնագավառում նրանք կատարել են բավա-  
կանաչափ առաջադիմական գործողություններ: Այսպես, օրինակ,  
ընդհանուր նարկոզի օգնությամբ կատարել են այնպիսի բարդ  
օպերացիա, ինչպիսին է ազդուսկրի բաց կտրվածքի բուժումը:  
Կնոջ կրծքագեղձի, ծունկ հոդի թարախային բորբոքումները բու-  
ժել են դանակով լայն և խորը կտրվածքներ առաջացնելու մեթո-  
դով: Վերքերը բուժել են զանազան սպեղանիններով, որոնց զու-  
գորդման մեջ մտել են ախտահանիչ և թմրեցուցիչ հատկություն ու-  
նեցող տարբեր դեղանյութեր, ինչպես նաև վերքը փափուկ պա-  
հոջ ճարպեր: Օձառով, տաք ջրով և գինով պահպանել են վերքի  
տուալետը և այլն<sup>1</sup>:

XI—XIV դարերում հայ բժիշկները հետաքրքրվել են նաև այն  
հարցով, թե հիվանդությունների ժամանակ ինչպիսի նյութական  
փոփոխությունների են ենթարկվում օրգան-սիստեմները՝ դրանց  
տեղակայումը և բնույթը: Այդ նպատակով նրանք կատարել են  
դիահերձումներ և տարբեր հիվանդությունների դեպքում նկարա-  
գրել են նորմայից կատարված բազմապիսի մակրոսկոպիկ պրոցես-  
ներ: Այսպես, օրինակ, տուբերկուլյոզի ախտաբանական նկարա-  
գրություններում հանդիպում են նաև լիմֆատիկ գեղձերի բորբոք-  
ման, ինֆիլտրատի, նրա կրացման և ընդհակառակը, քայքայման  
ու կավեռնանների գոյացման փաստերի նկարագրություններին:  
Բրոնխիտների ժամանակ՝ դրանց լորձաթաղանթի բորբոքման բնո-  
րոշ՝ ուռջման, հաստացման, անհարթության, բորբոքային պրո-  
ցեսի արգասիք հանդիսացող հեղուկի առկայությունը, որի հետե-  
վանքով և բրոնխների լուսանցքների նեղացման առաջացումը, դե-  
զինտերիայի ժամանակ հաստ աղիքներում խոցերի առաջացումը,  
թոքերի շնչական ուղիներում առաջացած կարմիր ու գորշ բորբո-  
քային զանգվածով լցնելու և շնչական մակերեսը նեղանալու հան-  
գամանքը: Նրանք շատ լավ դիտել ու նկարագրել են զանազան  
օրգան-սիստեմների բարորակ ու չարորակ նորագոյացությունները  
և այլ պաթոլոգիական միկրոսկոպիկ պրոցեսները<sup>2</sup>:

Ուշագրավ է նաև դատաբժշկական էքսպերտ բժիշկ Ե. Ա.

<sup>1</sup> Ա. Ս. Կոռյան, նյութեր միջնադարյան Հայաստանի վիրաբուժության վե-  
րաբերյալ (տես՝ ՀՍՍՌ ԳԱ Հայ բժշկության և բիրոլոգիայի պատմության սեկտորի  
գիտական աշխատությունների ժողովածու, № 1, Երևան, 1948, էջ 101—114):

<sup>2</sup> А. С. Кцоян, Патолого-анатомические представления армян-вра-  
чей в эпоху расцвета феодальных отношений, „Известия“ АН АрмССР,  
БО, № 6, Ереван, 1959, стр. 89—98.

Մակարյանի «Ռատական բժշկության պատմության հարցի շուրջը Հայաստանում» (հին ժամանակներից մինչև մեր օրերը) աշխատությունը: Ուսումնասիրելով մեր Մատենադարանի ձեռագրերը, հայկական հին կանոնագրքերը, Մխիթար Գոշի (XII դ.) և Սմբատ Սպարապետի (XIII դ.) դատաստանագրքերը, հանգում է այն եզրակացությանը, որ հատկապես XII—XIII դարերում դատական բժշկության նպատակներով Հայաստանում կատարել են դիակները և զանազան պատճառներից տուժված կենդանի մարդկանց քննություն: Ավելին. հեղինակը ցույց է տալիս, որ մեզ մոտ կատարել են էքսզումացիա, այսինքն՝ թաղված դիակը հանել և ենթարկել են դատաբժշկական քննության<sup>1</sup>:

Այնուհետև, սովետահայ բժշկապատմաբանները՝ իրենց կատարած ուսումնասիրություններում հանգում են այն կարևոր եզրակացության, որ հայ ժողովրդի պետական անկախությունը կորցնելուց հետո (1375 թ.), ընդհուպ մինչև Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումը (1828 թ.) բուն Հայաստանում բժշկագիտության բնագավառում գիտական քիչ թե շատ արժեք ներկայացնող ոչ մի գործ չի նկատվում: Ընդհակառակը, դրա փոխարեն բժշկության մեջ առատորեն զարգանում են գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող ախթարքներ, համայններ, միստիկա-մոզական բուժման ամեն տեսակի ձևեր ու կերպեր:

Հայրենական Մեծ պատերազմից (1941—1945) հետո սովետահայ բժշկապատմական գրականության մեջ երևան են դալիս մի շարք մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ, որոնք լուսաբանում են նախառևոյցի շրջանում Հայաստանում ժողովրդական առողջապահության, բժիշկների գործունեության և բժշկագիտության պատմության հետ կապված հարցերը: Այդ աշխատություններից պետք է նշել Լ. Ա. Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 4-րդ գիրքը (1947 թ.) ամբողջապես, Ա. Ս. Կժոյանի «Մալարիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը» (1950 թ.) թեկնածուական դիսերտացիան, Լ. Ս. Հովհաննիսյանի «Բժշկական գործը, բուժական հիմնարկները և բժշկական կադրերը Հայաստանում, Հայկական մարզի կազմակերպումից (1828 թ.) մինչև համաշխարհային

<sup>1</sup> Ե. Ա. Մակարյան, Դատաբժշկության պատմության հարցի շուրջը Հայաստանում (հին ժամանակներից մինչև մեր օրերը): (Թեկնածուական դիսերտացիա, մեքենագիր), 1959:

առաջին պատերազմը» թեկնածուական դիսերտացիան (1951 թ.), Գ. Գ. Հարությունյանի «Մանկաբարձությունը և գինեկոլոգիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև սովետական շրջանը» (1952 թ.) դոկտորական դիսերտացիան, Ա. Ա. Լալայանի «Ակադեմիկոս Ի. Պ. Պավլովի ուսմունքը հայ հասարակության մեջ» (1953 թ.) թեկնածուական դիսերտացիան, Խ. Բաղայանի «Ստոմատոլոգիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1956 թ.) թեկնածուական դիսերտացիան, Ռ. Ս. Փարսադանյանի «Հայ բժշկության պատմությունից» հետաքրքրական մենագրությունը (1958 թ.), Ե. Ա. Մակարյանի «Դատաբժշկության պատմության հարցի շուրջը Հայաստանում» (հին ժամանակներից մինչև մեր օրերը) թեկնածուական դիսերտացիան (1959 թ.) և բազմաթիվ հոդվածներ:

Այդ աշխատություններում նշվում է, որ պետական անկախությունը կորցնելուց հետո երկարատև պատերազմների հետևանքով տնտեսապես ու ֆիզիկապես բզկտված Հայաստանն ընկնում է օսմանյան Թուրքիայի և շահական Իրանի, հարյուրամյակներ տևող, կեղեքիչ լծի տակ: Տնտեսական, սոցիալական և կուլտուրական վերին աստիճանի ծանր անկում ապրող Հայաստանում, մինչև Ռուսաստանի հետ միանալը, չի եղել ոչ մի առողջապահական հիմնարկ, հիվանդանոց, բուժարան և դեղատուն: Հայկական մարզի կենտրոն Երևանում, գավառական քաղաքներում ու գյուղերում տիրում էր կատարյալ հակասանիտարական դրություն, որը բնակչության հետամնացության ու աղքատիկ ապրելակերպի հետ մեկտեղ, նպաստավոր պայմաններ էր ստեղծել սուր վարակիչ հիվանդությունների լայն տարածման և համաճարակների առաջացման համար: Ժողովրդին սպասարկում էին էմպիրիկ փորձի վրա սովորող մի քանի ժողովրդական բժիշկներ, ոսկրահարդարներ, վարսավիրներ, տատմերներ, քահանաներ և ակթարքներով զբաղվող մարդիկ: Գիտական կամ գիտահանրամատչելի բժշկական որևէ գրականություն գոյություն չուներ:

Ժողովրդի առողջապահության բնագավառը սկսում են գիտական մեթոդներ թափանցել Ռուսաստանից ուսական համալսարանավարտ հայ բժիշկների և ուս զինվորական բժիշկների ջանքերով: Ի դեպ՝ Հայկական մարզը եկող առաջին դիպլոմավոր հայ բժիշկը եղել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի սան՝ Սիմոն Գրիգորի Լոռու-Մելիքյանը: Իր անձնական դիմումի համաձայն, նա նշանակվում է Հայկական մարզի բժիշկ և 1833 թ.

մայիսի 20-ին երկու մանկաբարձուհիների և երկու բուժակների հետ ժամանում է Երևան<sup>1</sup>: Նա առաջին հայ բժիշկն է եղել, որ պայքարել է մեր ժողովրդի կենցաղում արմատացած հետամնաց սովորությունների ու հակասանիտարական վիճակի դեմ, և այդ ընթացքում սկսել է կիրառել ռուսական առաջադեմ բժշկագիտության նվաճումները: Այսպես, օրինակ, 1835 թ. օգոստոսի 6-ին Երևանից բժ. Ս. Գ. Վոռու-Մելիքյանը մեկնում է Օրդուբադ և այնտեղ տարածված համաճարակը վերացնելու նպատակով՝ ձեռնարկում է հակահամաճարակային միջոցառումներ:

Հայկական մարդում լայնորեն տարածված սուր վարակիչ հիվանդությունները մեծ կորուստներ էին պատճառում նաև ռուսական բանակին: Բանակի բժշկա-սանիտարական ծառայությունը նույնպես պայքարում էր բռնկվող համաճարակների դեմ: Լ. Ս. Հովհաննիսյանը գրում է, որ այդ նպատակով դեռևս 1829 թ. Երեվանում գտնվող հոսպիտալին կից, զինվորական բժիշկ Շումլերի ղեկավարությամբ կազմակերպվում և սկսում է գործել հակաժանտախտային կոմիտե: Ժանտախտի դեմ մղվող պայքարում ռուսական զինվորական հոսպիտալներում աշխատող բժիշկներից, իրենց անձնուրաց գործունեությամբ առանձնապես աչքի են ընկել Շումլերը, Դեպարտվիչը, Լիսիցինը, Օլիմպիևը, Դոնցևը, Տենյակովը, Ռումյանցևը, Նեոպոլիտանսկին և Ստեփանովիչը, որոնցից առաջին երեքը հիվանդացել և մահացել են այդ ընթացքում<sup>2</sup>:

Սովետահայ բժշկապատմաբանների ուսումնասիրություններում ակնհայտ կերպով ցույց է տրված, որ սկսած XIX դարի 30-ական թվականներից ռուսական առաջադեմ բժշկագիտության փորձը գնալով կիրառություն է գտնում Հայաստանում:

«Դատաբժշկագիտության վիճակը Հայաստանում XIX դարի առաջին կեսում» աշխատության մեջ ապացուցված է, որ XVI դարի վերջերից սկսած մինչև 1828 թվականը բուն Հայաստանում դատաբժշկականություն զոյություն չի ունեցել: Բոլոր տեսակի սպանությունների, ինքնասպանությունների, ինչպես նաև զանազան վնաս-

1 Ա. Ս. Կծոյան, XIX դարի առաջին կեսի ռուսական բժշկագիտության առաջին հայ սաները (տե՛ս ՀՍՍՌ ԳԱ-ի հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», № 7, Երևան, 1952):

2 Լ. Ս. Հովհաննիսյան, Բժշկական գործը, բուժական հիմնարկները և բժշկական կադրերը Հայաստանում Հայկական մարզի կազմակերպումից (1828 թ.) մինչև համաշխարհային առաջին պատերազմը (1914 թ.) թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատը, Երևան, 1951 էջ 7:

վածքների հետևանքով տուժած անձանց դատաբժշկական քննութ-  
յան շէին ենթարկում և հանցավորներին շէին պատժում: Միայն  
Ռուսաստանի հետ միանալուց հետո Հայաստան են ուղարկվում  
դատաբժշկության վերաբերյալ ընդարձակ հրահանգչական ցու-  
ցումներ, որոնք կազմված էին, ինչպես պարզվեց մեր հետազո-  
տությունից, ահադ. Ի. Վ. Բույալսկու 1826 թվականին կազմված  
«Руководство врачам при осмотре мертвых» աշխատության  
հիման վրա: Մենք չգիտենք որոշակի, թե երբ են ստացված այդ  
հրահանգչական ցուցումները, սակայն դրանց համաձայն էջմիածնի  
այգիներում անհայտ պատճառներից մահացած մարդկանց դիակ-  
ների էքսզումացիայի հիման վրա կատարված դատաբժշկական  
քննության ակտերը և տված եզրակացությունները վերաբերում են  
1832 թ. օգոստոսի 5-ին<sup>1</sup>:

Այնուհետև, XVIII դարի վերջերից սկսած, ռուսական բժշկա-  
գիտության դպրոցի լավագույն տրադիցիաների օրինակով՝ հայ  
բժիշկները մայրենի լեզվով գրում են ինքնուրույն աշխատություն-  
ներ՝ բժ. Պետրոս Քալանթարյանը՝ «Բժշկարան՝ համառոտ»  
(1793 թ.), բժշկապետ Ստեփանոս Շահրիմանյանը՝ «Տնկարանու-  
թյուն կամ փղորա Հայաստանի» (1818 թ.) բժշկական բուսաբա-  
նական և դեղագիտական սովորածավալ շատ արժեքավոր գործը,  
բժ. Սիմոն-Լոռու-Մելիքյանը՝ «Բժշկարան» (1825 թ.) և այլն:

Ն. Մ. Ամբոգիկի աշխատությունների հայերեն թարգմանու-  
թյունների շուրջը՝ մեր հոգովածում ցույց ենք տվել, որ XIX դ. առա-  
ջին երկու տասնամյակներում արդեն հիմք է դրվում ռուս առաջադեմ  
գիտնականների գործերը հայերեն թարգմանելու աշխատանքերին:  
Գրավոր խոսքով նույնպես պրոպագանդելով ռուսական բժշկագի-  
տության լավագույն ավանդները հայ բժիշկները ձգտում էին մեր  
երկրում բժշկական, սանիտարական, առողջապահական գործը գի-  
տական հիմքերի վրա դնել<sup>2</sup>: Ռուսական մանկաբարձության, ման-  
կաբուժության և դեղագիտության հիմնադիր պրոֆ. Ն. Մ. Ամբո-  
գիկի աշխատություններից երեքը՝ «Բժշկական բուսաբանությունը»

1 Ա. Ս. Կոռյան և Ե. Ա. Մակարյան, Դատաբժշկագիտության վիճակը Հա-  
յաստանում XIX դարի առաջին կեսում: Տես՝ Գլխավոր դատաբժշկագիտա-  
կան էքսպերտիզայի բյուրոյի և Երևանի Բժշկական ինստիտուտի դատա-  
կան բժշկության ամբիոնի գիտական աշխատությունների ժողովածու, № 1, Երե-  
վան, 1956, էջ 48—61 (ռուսերեն լեզվով):

2 Ա. Ս. Կոռյան, Ն. Մ. Ամբոգիկի աշխատությունների հայերեն թարգմա-  
նությունների շուրջը (տես՝ ՀՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժան-  
մունքի «Տեղեկագիր» № 6, Երևան, 1953, էջ 89—97):

1808—1809 թթ. երկու գրքերը և «Ֆիզիոլոգիա և սաղմնաբանութիւն» (1814 թ.) թարգմանվել են հայերեն լեզվով: Դրանցից երկուսը գտնվում են մեր Մատենադարանում և պահվում են 9285 և 9225 համարների տակ, իսկ երրորդը՝ Մոսկվայի Լենինի անվան գրադարանի հայկական ձեռագրերի ֆոնդի՝ № 8 ձեռագիրն է:

Այնուհետև, սովետահայ բժշկապատմաբանների ուսումնասիրութիւններն ակնառու կերպով ցույց տվեցին, որ մեծ լուսավորիչ ու դեմոկրատ խաչատուր Աբովյանի և, հատկապես, ականավոր ռեուլյուցիոն-դեմոկրատ, հրապարակախոս ու գրող Միքայել Նալբանդյանի և նրանց հետևորդների աշխատութիւններն ու գործունեութիւնը մեծապես ազդել են նաև XIX դարի երկրորդ կեսի հայ բժշկական հասարակայնութեան վրա: Նրանց ազդեցութեան շնորհիվ ավելի են ուժեղանում հայ բժիշկների հետաքրքրութիւնն ու համակրանքը ուսական բժշկագիտութեան առաջադեմ մտքի նրկատմամբ:

Շատ նշանակալի է Կովկասի ժողովուրդների առողջապահութեան սպասարկման և բժշկագիտութեան զարգացման խնդրում տակավին 1864 թվականին Թբիլիսիում կազմակերպված Կովկասյան բժիշկների ընկերութեան կատարած դրական դերը: Ժողովուրդին ծառայելու տենչով տոգորված, ընկերութեան մեջ համախմբված ուսու, վրացի, հայ, ազրբեջանցի և այլազգի առաջավոր հայրենասեր բժիշկները իրենց առաջ խնդիր են դնում՝ բարեկարգել ժողովրդի բուժ-սանիտարական սպասարկման գործը, պայքարել խիստ տարածված սուր վարակիչ հիվանդութիւնների դեմ, նպաստել բժշկագիտութեան զարգացմանը, և կազմակերպել մասնագիտական գրականութեան հրատարակութիւնը և այլն:

Անցյալ դարի 80—90-ական թվականներից սկսած, հայ գրականութեան մեջ զարգացող բժշկական գիտական միտքը կրել է գերազանցապես ուսական ինքնատիպ բժշկագիտութեան բարերար ազդեցութիւնը: Այս տեսակետից մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Ա. Ա. Լալայանի «Ակադեմիկոս Ի. Պ. Պավլովի ուսմունքը հայ հասարակութեան մեջ» վերևում արդեն նշված աշխատութիւնը: Այստեղ ուշագրավ փաստերի օգնութեամբ հեղինակը բացահայտում է XIX դարի վերջերին, նախառեուլյուցիոն շրջանում և ռեուլյուցիայից հետո, գլխավորապես Պետերբուրգում և Մոսկվայում ուսական ֆիզիոլոգիայի ուսմունքի ոգով հայ գիտական կադրերի առաջացման և Սովետական Հայաստանում պավլովյան բնագիտական-դիալեկտիկա-մատերիալիստական ֆիզիոլոգիական գիտութեան ստեղծման ու զարգացման համառոտ պատմութիւնը:

Աշխատութեան մեջ վեր է հանված աշխարհահռչակ գիտնականի աշակերտներին՝ Վարդանովի, Լ. Ա. Օրբելու, Խ. Ս. Կոչտոյանցի, Է. Հ. Հասարթյանի, Ա. Ի. Քարամյանի, Գ. Պ. Մուշեղյանի և այլոց կյանքն ու գործունեությունը:

XIX դարի և XX դարի սկզբի հայ բժշկական գրականության մեջ զարգացող սանիտարական կրթական և հիգիենիկ գիտությունների առաջադեմ մտքին է նվիրված Ռ. Ս. Փարսադանյանի «Հայ բժշկության պատմությունից» արդեն հիշատակված մենագրությունը: Հարուստ փաստական նյութերի հիման վրա հեղինակը նկարագրում է հիշյալ շրջանում ապրած յոթ հայ նշանավոր բժիշկներին՝ Գավիթ Ռոստոմյանի, Լևոն Տիգրանյանի, Ավետիք Բաբայանի, Մարգար Առուստամյանի, Բագրատ Նավասարդյանի, Արտաշես Բուդաղյանի և Վահան Արծրունու կյանքը, բժշկական, գիտական-հասարակական արդյունավետ ու շնորհակալ գործունեությունը: Նացույց է տալիս, թե ինչպես ցարական դաժան իրականության պայմաններում, վերոհիշյալ բժիշկները քրտնաջան աշխատանք են ծավալում բարձրացնելու ժողովրդի սան-կրթական մակարդակը: Նըբանք ձգտել են՝ կիրառել պրոֆիլակտիկ միջոցառումներ և բարեկարգել ժողովրդի բուժ-սանիտարական սպասարկման գործը: Մեր հիշյալ բժիշկներից հատկապես Արտաշես Բուդաղյանը, Մարգար Առուստամյանը, Ավետիք Բաբայանը և ուրիշներ հիվանդությունների առաջացումը սերտորեն կապում էին սոցիալական միջավայրի՝ աղքատության, հակասանիտարական պայմանների և անդործության հետ: Միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո վերացան հիվանդությունների տարածման այդ սոցիալական նախադրյալները:

Սովետական Հայաստանում զարգացող առողջապահության գործի կազմակերպման և բժշկագիտության պատմության ստեղծման ուղղությամբ դեռ շատ քիչ բան է արված: Այստեղ աչքի ընկնող գործ պետք է համարել Լ. Ա. Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության 5-րդ մեծածավալ հատորը, որը նվիրված է Սովետական Հայաստանում առողջապահության կազմակերպման գործին, բժշկական կրթության, կարգերի պատրաստման և բժշկագիտության զարգացման պատմությանը, մինչև 1947 թ. ներառյալ: Այնուհետև հրատարակված են Խ. Ն. Փիրումյանի և Ս. Ա. Ճշմարիտյանի «Առողջապահության գործը Սովետական Հայաստանում 20 տարում» (1941 թ.), Ա. Ի. Խրիմյանի «Առողջապահության գործի զարգացումը Սովետական Հա-

յաստանում 30 տարում» (1952 թ.), Ս. Պ. Նանասյանի, Ռ. Ս. Փարսադանյանի և Ա. Ի. Խրիմյանի «Առողջապահությունը 40 տարում Սովետական Հայաստանում» (1961 թ.) գրքուկները:

Մեր ռեսպուբլիկայի և միութենական պարբերական մամուլում, գիտական զանազան ժողովածուներում և հանդեսներում լույս են տեսել Սովետական Հայաստանում սուր վարակիչ հիվանդությունների դեմ մղած պայքարում ձեռք բերված հաջողություններին, Երևանի Պետական Բժշկական ինստիտուտին, ինչպես նաև մալարիայի և բժշկական պարագիտությունների, կուրորտոլոգիայի և ֆիզիկական մեթոդներով բուժման, մանկաբարձության և գինեկուլոգիայի, ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի, արյան փոխներարկման և հեմատոլոգիայի, օրտոպեդիայի և տրավմատոլոգիայի և այլ ինստիտուտների լաբորատորիաների ստեղծման և զարգացման պատմությունը նվիրված առանձին հոդվածներ: Ուշագրավ են Մ. Մ. Մելիք-Քարամյանի «Երևան քաղաքի բնակչության առողջական վիճակը և նրա առողջապահության սպասարկման գործի կազմակերպումը մինչև 1941 թ.» (ձեռագիր, 1958 թ.), Գ. Ա. Ղևոնդյանի «Հայկական ՍՍՌ-ի առողջապահությունը 25 տարում» (1946 թ., ձեռագիր) ուսումնասիրությունները: Սովետահայ բժշկա-պատմաբանների հրատարակած աշխատանքների շնորհիվ, Հայաստանում զարգացող բժշկագիտության պատմությունը տեղ է գտել նորրիս հրատարակված բժշկագիտության մեծ հանրագիտարանում— ԵՄԶ-ի № 17, Միություն բժշկական բուհերի համար գրված պրոֆ. Պ. Մուլտանովսկու «Բժշկագիտության պատմություն» (1961 թ.) դասագրքի և այլ մենագրություններում ու հանդեսային հոդվածներում:

Բացի մեր միութենական կենտրոնական քաղաքներում հրավիրվող բժշկագիտության պատմության նվիրված գիտական սեսիաններից և կոնֆերանսներից սովետահայ բժիշկ-պատմաբանները (Լ. Ա. Հովհաննիսյան և Ա. Ս. Կծոյան) զեկուցումներով հանդես են եկել միջազգային բժշկագիտական կոնգրեսներում:

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ամենօրյա հոգատարության շնորհիվ Սովետական Հայաստանում ժողովրդի առողջապահությունը սպասարկող հիմնարկների խիստ ցանցը և հատկապես բժշկագիտության բնագավառում ստեղծված գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատությունները, իրենց նշանակությամբ դուրս են եկել ռեսպուբլիկայի և միութենական սահմաններից:

## ДОСТИЖЕНИЯ ИСТОРИОГРАФИИ МЕДИЦИНЫ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ ЗА 40 ЛЕТ

### Р е з ю м е

Советские историки медицины акад. Л. А. Оганесян, Х. А. Мелик-Парсаданян, Г. Г. Арутюнян, А. С. Кцоян, Г. О. Язмаджян и др. путем всестороннего и детального изучения истории армянского народа, археологии, материальной культуры, филологии и этнографии убедительно доказали, что медицинская культура была развита в Армении еще за несколько веков до нашего летосчисления.

В раннем средневековье в Армении существовали лепрозории, больничные учреждения с различными отделениями: терапевтическим, хирургическим и для острозаразных больных. Помимо наличия богатой литературы на родном языке, в Армении в течении VI—VIII вв. были переведены на армянский язык некоторые труды классиков греко-римской медицины: Гиппократ, Аристотеля, Диоскоридоса Орибазиса и др.

Исследованиями советских историков медицины доказано, что классики армянской медицины — Мхитар Гераци (XII в.), врач Григорис (XIII в.), Амирдовлат Амасаци (XV в.) и др. в своей практической врачебной и научной деятельности широко пользовались как арабской медицинской литературой, так и оригинальными трудами греко-римских врачей. Специальными исследованиями истории медицины эпохи расцвета феодальных отношений (XI—XIII вв.) доказано, что врачи-армяне, освоив лучшие достижения греко-римской, византийской и так называемой арабской медицины, продолжали развивать свою самобытную медицину и в отдельных отраслях медицинских знаний достигли больших успехов.

После присоединения Армении к России под благотворным влиянием русской передовой медицинской науки в стране происходит постепенное улучшение постановки здравоохранения: в лечебно-санитарной, профилактической областях.

В тот же период появляются и научные работы.

Далее дается обзор медицинской литературы, посвященной вопросам народного здравоохранения, медицинского образования и науки в период Советской власти.

И. Х. ГЕВОРКЯН

## РАЗВИТИЕ ХИРУРГИИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Изменившиеся социально-экономические условия жизни армянского народа создали все предпосылки для развития и процветания дела народного здравоохранения в молодой советской республике, которая в этом отношении мало что унаследовала от дашнакской Армении. Большие успехи достигнуты за 40 лет Советской власти в нашей республике в области практической хирургии.

Так, количество хирургических коек в республике возросло почти в 45 раз, а число работающих хирургов более чем в 85 раз. Особенно заметный скачок произошел после Великой Отечественной войны. Если в 1947 году в Армянской ССР работали около 100 хирургов, а количество хирургических коек достигало 860<sup>1</sup>, то на 1/1—1960 года в республике было 350 хирургов и имелось 1813 хирургических коек. До установления Советской власти хирургическая служба была представлена только в двух городах Армении, в настоящее же время все районы Армянской ССР обеспечены как больничными койками, так и специалистами-хирургами.

С каждым годом расширяется специализация хирургической помощи. На 1/1—1960 года 35% всех хирургических коек было специализировано. Это означает, что трудящиеся

---

<sup>1</sup> С. С. Шариманян, Труды III Закавказского съезда хирургов, Ереван, 1947.

Армянской ССР могут получать в своей республике высококвалифицированную помощь при травматических повреждениях, туберкулезе легких, костей и суставов, новообразованиях, заболеваниях центральной и периферической нервной системы, мочеполовой и сердечно-сосудистой систем и т. д.

Повседневное расширение материально-технической базы как городских, так и сельских больниц (рентген. установки, лаборатории, новая аппаратура и др.) способствует лучшей диагностике хирургических заболеваний, а широкое применение комплексной терапии (медикаментозное, физиотерапевтическое и др. виды лечения) приводит к дальнейшему улучшению результатов лечения.

В настоящее время в Армянской ССР функционируют 34 станции скорой и неотложной медицинской помощи, из них 11 в сельских районах. Организация в Ереване новой станции и районирование города значительно повысили качество медицинской помощи при urgentных хирургических заболеваниях. Широко используется для медицинских целей санитарная авиация, которая дает возможность оказывать своевременную квалифицированную хирургическую помощь в районах республики.

Поистине замечательные успехи достигнуты за прошедшие годы в деле подготовки национальных кадров в области хирургии. Как указывалось, в Армянской ССР в настоящее время работает около 350 хирургов, воспитанных и выросших преимущественно в местных клиниках и городских больницах. Немало хирургов — питомцев Ереванского медицинского института успешно работает и за пределами Армянской ССР.

За прошедшее время свыше 50 хирургов республики защитили диссертации, из них 13 на степень доктора медицинских наук. На сегодня в Армянской ССР работает 8 профессоров-хирургов, 9 доцентов и 10 старших научных сотрудников. Среди хирургов у нас имеется 9 докторов и свыше 30 кандидатов медицинских наук. Только за последние 4 года диссертации на соискание ученой степени кандидата медицинских наук защитили 5 практических врачей-хирургов. Звание заслуженного деятеля науки Армянской ССР присвоено

5, а заслуженного врача — 10 хирургам. Около 30 женщин-армянок, среди них 3 кандидата медицинских наук, посвятили себя хирургии и с честью выполняют благородную работу хирурга.

Уже через два года после установления Советской власти в Армении в столице молодой республики было организовано первое высшее медицинское учебное заведение, сначала в виде факультета университета, а с 1930 года — самостоятельного института. Ереванский медицинский институт сыграл огромную роль в деле становления и развития хирургии в Советской Армении. Хирургические клиники явились основными центрами, в которых оказывалась населению республики квалифицированная хирургическая помощь, подготавливались кадры специалистов и развивалась хирургическая наука. Наряду с клиниками медицинского института, для развития хирургии в Армении большое значение имели организованные позднее научно-исследовательские институты: рентгенологии и онкологии, гематологии и переливания крови, ортопедии и травматологии, а также хирургическая клиника факультета усовершенствования врачей.

Вскоре после организации Ереванского медицинского института в республике возникает первая национальная хирургическая школа, основателем и руководителем которой явился заслуженный деятель науки, покойный профессор А. С. Кечек. Ученик знаменитого русского хирурга Н. А. Вельяминова, А. С. Кечек в 1923 году переехал из Ростова в Армению и развернул здесь большую и плодотворную деятельность. Без преувеличения можно сказать, что почти все хирурги старшего поколения и значительное число хирургов среднего поколения в Армянской ССР прошло через школу А. С. Кечека.

Из первой армянской хирургической школы вышло много замечательных учеников, среди которых прежде всего следует отметить заслуженного деятеля науки проф. С. С. Шариманяна, преемника и продолжателя дела своего учителя. Будучи руководителем кафедры общей хирургии и председателем республиканского общества хирургов, С. С. Шариманян отдает много сил и энергии дальнейшему развитию хирургии в Армянской ССР. Он одновременно является основоположни-

ком нейрохирургии в республике и учителем первых врачей-армян этой специальности (С. Г. Зограбян, С. С. Оганесян и др.).

Другой питомец этой школы проф. В. О. Саруханян успешно руководит хирургической клиникой санитарно-гигиенического факультета Ереванского медицинского института.

А. С. Кечек, будучи крупным специалистом в области урологии, проработавший около десяти лет в клинике проф. Н. А. Вельяминова и побывавший в лучших урологических клиниках Европы, является также основоположником урологии в Армянской ССР. Его преемником в этой области был покойный доцент М. А. Карапетян, организатор и многолетний руководитель первого урологического отделения в республике.

Наконец, нельзя не отметить большие заслуги проф. А. С. Кечека также в организации и руководстве медицинского факультета Ереванского университета в качестве одного из первых его деканов.

Большую практическую работу в области хирургии провел в Армянской ССР другой старейший хирург, покойный проф. А. Г. Мирза-Авакян. Замечательный диагност и прекрасный техник-оператор, он еще в 1927 году успешно удалил одним из первых в СССР пулю из левого желудочка сердца. Ряд лет проф. А. Г. Мирза-Авакян руководил госпитальной хирургической клиникой Ереванского медицинского института. Свое первое хирургическое образование в этой клинике получили многие в последующем известные хирурги республики (проф. Р. О. Еолян, доц. А. А. Дуринян, доц. Э. С. Мартикян и др.).

Говоря о развитии хирургии в Армении за прошедшие 40 лет Советской власти, нельзя не вспомнить покойного проф. Г. А. Мелконяна. Сначала в Ереване, затем в Ленинакане, а с 1930 года вновь в Ереване проф. Г. А. Мелконян развернул большую хирургическую деятельность и произвел впервые в нашей республике ряд сложных оперативных вмешательств при таких тяжелых заболеваниях, как рак пищевода и гортани. Он является автором работы «Остеогенез вне организма», вызвавшей в свое время большие споры по этому вопросу. Около 16 лет проф. Г. А. Мелконян руководил гос-

питальной хирургической клиникой Ереванского медицинского института и подготовил много хирургов, работающих ныне в городах и селах нашей страны. В свое время он уделял большое внимание вопросам онкологии и стоматологии и читал по этим разделам хирургии специальные курсы студентам медицинского института.

Ученик проф. Г. А. Мелконяна, покойный доцент А. С. Саакян явился одним из основоположников челюстно-лицевой хирургии в Армянской ССР. Работу в этом направлении в настоящее время успешно возглавляет доцент Г. М. Егян. Преемником проф. Г. А. Мелконяна по госпитальной хирургической клинике стал заслуженный деятель науки проф. И. Х. Геворкян, который с 1952 года руководит этой клиникой.

Большие заслуги в развитии хирургии в Советской Армении имеет покойный профессор, заслуженный деятель науки Р. О. Еолян. Начав свою хирургическую деятельность с районного врача, он в дальнейшем стал руководителем факультетской хирургической клиники Медицинского института и организованного по его инициативе научно-исследовательского института гематологии и переливания крови. Р. О. Еолян явился первым хирургом-армянином, удостоившимся чести быть избранным членом-корреспондентом Академии медицинских наук СССР.

Автор двух учебников по хирургии, написанных на армянском языке, трех монографий и многих других научных работ, проф. Р. О. Еолян воспитал большой коллектив хирургов, отдав много сил и энергии делу развития хирургии в нашей республике. Среди его сотрудников и учеников можно отметить проф. Р. Л. Пароняна — преемника проф. Р. О. Еоляна по факультетской хирургической клинике, доцентов В. С. Согомояна и С. Х. Авдалбекяна, кандидатов медицинских наук Г. А. Джагиняна, С. З. Оганесяна и др.

Развитие ортопедии и травматологии в Армянской ССР связано с именем заслуженного деятеля науки проф. Х. А. Петросяна, замечательного специалиста и автора многих методов ортопедических операций. Созданный по инициативе проф. Х. А. Петросяна Научно-исследовательский институт ортопедии и травматологии, руководимый в настоящее время

его учеником проф. И. Г. Исаакяном, осуществляет в республике большую работу по изучению травматизма и ортопедических заболеваний. Особенно большая работа проведена институтом в области лечения детей, страдающих врожденными и приобретенными заболеваниями опорно-двигательного аппарата. За годы существования института в нем выросло много способных и активно работающих хирургов (А. Д. Тохян, С. С. Оганесян, Л. М. Григорян, О. К. Хачатрян, С. З. Петросян и др.).

Проф. Х. А. Петросян свыше 25 лет руководил также кафедрой оперативной хирургии и топографической анатомии Ереванского медицинского института. Его преемником в этом деле является другой его ученик, проф. А. Д. Джагарян — один из пионеров сердечной хирургии в нашей республике.

Наряду с руководителями хирургических клиник Медицинского института во многих городах и районах Армянской ССР плодотворно работал и продолжает работать ряд хирургов, умело сочетающих большую практическую деятельность с научно-исследовательской (Г. К. Богатуров, Л. Я. Арешев, М. М. Есаджанян, Т. Л. Кристостурян, А. Авакян, И. А. Осепян, А. В. Мягков и др.). Особенно хочется подчеркнуть многолетнюю плодотворную работу заслуженного врача республики А. О. Товмасыана.

С удовлетворением можно отметить, что у нас растут прекрасные хирургические кадры, достойная смена своих учителей. Хирурги Советской Армении за последние годы достигли значительных успехов в деле внедрения в практику народного здравоохранения специализированной хирургической помощи (нейрохирургия — С. С. Шариманян, С. С. Оганесян, С. Г. Зограбян; онкология — С. С. Атанесян, Г. Г. Данелян; урология — А. А. Мидоян, Г. Мартиросян, Г. А. Ахвердян; челюстно-лицевая хирургия — Г. М. Егян и др.). В деле подготовки хирургических кадров большую помощь органам здравоохранения Советской Армении оказывали и продолжают оказывать многие ведущие специалисты Советского Союза, в частности Москвы, Ленинграда, Киева, Харькова и др. городов.

Замечательным стимулом для развития хирургии явились закавказские съезды и конференции хирургов братских республик: Азербайджанской, Грузинской и Армянской. За минувшие 40 лет хирурги республик Закавказья встречались на съездах и конференциях 5 раз (Баку — 1925 г., Тбилиси — 1936 г., Ереван — 1947 г., Баку — 1953 г. и Тбилиси — 1957 г.). Обсуждение на этих съездах и конференциях вопросов организации хирургической помощи, краевой патологии и ряда актуальных вопросов современной хирургии сыграло большую роль для обмена опытом и внедрения в практику народного здравоохранения достижений медицинской науки.

Наконец, нельзя не отметить огромную роль республиканского хирургического общества в развитии хирургии и подготовке молодых кадров. Хирургическое общество явилось большой школой, через которую прошли буквально все хирурги Армянской ССР. Значительна роль руководителей этого общества в развитии теории и практики хирургии — заслуженных деятелей науки профессоров А. С. Кечека, Р. О. Еоляна, Х. А. Петросяна и С. С. Шариманяна.

Для развития хирургии в Советской Армении имело важное значение печатное слово. Был переведен на армянский язык ряд учебников по хирургии — «Курс оперативной хирургии» В. Н. Шевкуненко, «Общая хирургия» А. М. Заблудовского и др., а также изданы оригинальные учебники армянских авторов. Так, еще в 1935 году вышел учебник по военно-полевой хирургии проф. Р. О. Еоляна, а в дальнейшем избранные главы по частной хирургии того же автора и учебник общей хирургии проф. С. С. Шариманяна.

